


3521

Горчичный

Горчичный



1901

2010

* 2002

ՅԵՐԱԿԱՆ ՀԱՅՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՎԱԿԱՆ ՈՒԹԵԱՆ

ԱՄԱԿՐԹՈՒԹԵԱՆ ԱՄԲՈՂՋ ԴԱԸՆԹԱՑՔ

ՀԱՍԱԿԵԴՐՈՆ ԴՐՈՒՅԹԵԱՄՔ

ՆՈՐ ԴՊՐՈՑ

Բարոյազիտուրին, Թաղաֆ. Կրուրին,
ամսուրին, Աշխարհագրուրին, Թուարանուրին,
Դիսուրիններ, Մայրենի լեզու

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

Տարրական Բնիքը

Գ. ՊՐԱԿ

ԳԻՒՔ ԱՇԱԽԵՐՑԻՆ

մարվ նութար ջլիլ սնկ 187 սորով ա զ

նար խլո ք հ շ տ ն ա մ ե ս ի լ ե տ ե մ ա ն օ ւ

191.99-8

7-23

ՀԱՅՈՒԹՅԱՆ

ՄՄԲԱՏ ԴԱՄԲԵԱՆ

1901

491.99-8
Դ-23 ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ԸՆԿԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԲՆԿԵՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՆ ՊԵՏՔԻ

II. ԽՕՍԽՎՈՒԹԻՒՆ. — ԸՆԿԵՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՆ ՊԵՏՔԻ. — Մարդիկ առանց իրարու չեն կրնար ապրիլ :

Լսա՞ծ էք արդեօք Ռոպէնառնի պատմութիւնը : Ռոպէնառն նաևի մը մէջ ճամբորդութիւն կ'ընէր, երբ նաևը ընկղմեցաւ և ալիքները զինքը նետեցին անմարդաբնակ կղզի մը : Զորս կողմը անսասներ, կենդանիներ, դաշտեր ու ձորեր, բայց Ռոպէնառն միաժինակ՝ կը նեղուէր, կը չարչարուէր որ մարդ չիգանուիր իր քովը : Օր մը ծովին ալիքները ուրիշ մէկը նետեցին կղզիին ափը, խափշիկ մըն էր ան՝ Ռորբաթ անունով : Ռոպէնառն չէր հասկնար խափշիկին լեզուն, ան ալ իրենը չէր հասկնար, բայց ի՞նչ հոգ, Ռոպէնառն այնքան ուրախ էր ընկեր մը ունենալուն համար որ պաշտպանեց խափշիկը, սիրեց զանի, ան ալ զինքը սիրեց, բարեկամ եղան :

Մեզմէ ոչ մէկը կրնայ առանձին ապրիլ: Թո՛ղ մարդ մը շատ փառաւոր առան՝ պարոէզ ունենայ, թո՛ղ լաւ հագուստ՝ լաւ ուտելիք ունենայ, ի՞նչ օգուտ երբ մինակ է . սիրող կը նեղուի, պիտի չկրնայ համերել, ընկեր պիտի վնասէ : Բաել է թէ մարդ ընկերական կեանքի պէտք ունի, մարդ պէտք է ուրիշ մարդերու հետ ապրի, աշխատի անոնց համար, ինչպէս անոնք ալ կ'աշխատին իրեն համար : Ռորեմն պէտք է իրարու հետ ընկերաբար ապրինք, իրարու բարեկամ ըլլանք, իրար Նոր Դպրոց, Գ. Պըտէ

սիրենք , մէնք առանց իրարու չենք կրնար ապլիկ :

1. Առած. Մարդ պէս է բոլոր արտօվը սիրե ուրիշ մարդիկը՝ իր ընկերները :

2. Առած. Երե բան մը առնեմ , պէս է փոխարենը տամ . — երե ընկերական կեանին օգուտ մը բաղեմ , պէս է փոխարարաբար օգտակար ըլլամ ընկերական կեանին :

3. Խօսականութիւն . — Պարտականութիւն դէպ ի մարդիկ . Բոլոր մարդիկ մէկամեղ կը կազմին շատ միծ ընտանիք մը : Ենթադրենք որ ընտանիքի մը մէջ վէճեր կան և շատերը իրար չեն սիրեր : Երբ տունէն մէկը հիւանդանայ , բոլոր վէճերը կը դարդին և ամէն մարդ կուգայ հիւանդին քով և անոր խնամք կը տանի :

Անդամ մը երկու դրացի աղջեր իրարու հետ կոխ ըրին , մէկը միւսին յաղթեց և անոր քաղաքներն առաւ , յաղթողներուն կ'ըսէին Գերմանացի , յաղթուողներուն միանացի : Ֆրանսացի գիւղացի մը դաշտին մէջէն անցած առան , տեսաւ որ ճամբուն քովը Գերմանացի զինուոր մը ինկած է և «Աստուծոյ սիրուն՝ ինձի քիչ մը ջուր . . . » կը պոռայ : Գիւղացին անմիջապէս թշնամի զինուորին քովը վագեց : Զինուորը կարծեց թէ եկաւ զինքը սպաննելու , բայց ո՞րչափ զարմացաւ երբ տեսաւ որ գիւղացին իրեն խմելու ջուր բերաւ , իր վերքը լուսաց , թաշկինակովը կապեց , յետոյ թեւը մտնելով իր ընկերներուն քովը տարաւ :

3. Առած. ես մարդ եմ . ո՞չ մեկ մարդ ինձի համար օստական է :

3. Խօսականութիւն . — Եղբայրական զզացում . — Առաջ մը թունուղի ծովեղերքէն յուսահատ աղաղակներ լուսեցան : Տեսնուեցաւ որ մարդ մը ծովուն մէջ լուգանք ըրած ժամանակ , ալիքները զայն առեր կը տանէին :

31584-Ա2

Ծովը սաստիկ յուղուած էր և միծ ալիքներ կային , խեղճ մարդը ալիքներուն վրայ կը բարձրանար ու անոնց ներքեւը կ'իջնէր , ո՞վ կը համարձակէր զանի աղատելու համար ծովը նետուիլ : Այդ մարդը օսարական էր , որ օր մ'առաջ եկած էր թունուղ . մարդ չէր ճանչնար զինքը : Ծովեղերքը քաջ երիտասարդդ մը կար , երկաթուղիի պաշտօնեցի , որ ըստաւ . «Ո՛վ կ'ըլլայ թող ըլլայ , հերիք է որ մարդ է , պէտք է աղատել » ու նետուեցաւ ծովուն մէջ՝ խեղդուողը աղատելու համար :

4. Առած. Պարկեց մարդը ինչ քարիս որ ձեռքին գայ կ'ընէ :

5. Առած. Տուիժ ամեն մարդու , ինչ որ պարտաւոր է տալու :

4. Խօսականութիւն . — Յարաքերութիւններու մէջ ազնիւ ըլլալու է . — Դուք ունիք ընկերներ , բարեկամներ , ուրոնց հետ խօսակցելով ու խաղալով ուրախ կ'ըլլաք : Միշտ աշխատեցէք անոնց հետ անուշութեամբ վարուիլ գուարթ ու ազնիւ ըլլալ : Զգոյլ եղէք որ բնաւ գէշ չխօսիք անոնց վրայ , բնաւ չծաղրէք զանմաք , ու երբ անոնք ներկայ չեն , գէշ խօսքեր չխօսիք անոնց վրայով :

Ամէն մարդ իր աղէկ ու գէշ կողմերն ունի : Ան որ միշտ ուրիշները կը ծաղրէ , շատ անդամ ինքը ամէնէն աւելի ծիծաղելի կողմեր ունի : Ես պղտի տղայ մը կը ճանչնացի որ սովորութիւն ըրած էր իր ընկերներէն ամէն մէկուն անուն մը դնել ու զանմաք ծաղրել : Մէկուն կ'ըսէր թէ դուն խոճող ես , ուրիշի մը՝ բարկացու ես , երրորդի մը՝ սախու ես , չորրորդի մը՝ սկեղ դեմի ունիս , վերջապէս ամենուն ալ մէկ մէկ բան կը կցէր :

Այնքան գէշցած էր այս պղտիկ աղին բնաւորութիւնը , որ նոյն խել իր ուսուցիչը կը ծաղրէր , շատ

14527-58



անդամ ընկերներուն առջև անոր խօսելու և շարժելու ձեւերը ընկելով , կապիկի մը պէս :

Այս տղին հայրն ու մայրը խրատեցին զինքը , ընկերները յանդիմանեցին , բայց մտիկ չըրաւ : Քիչ քիչ ամի՞ն մարդ իրո՞է պաղեցաւ , ընկերները ա'լ չխօսեցան անոր հետ , մէկ հոգի չմնաց որ անոր բարեկամ ըլլայ : Այս ասեն շատ ախրեցաւ , զգջաց իր ըրածներուն , բայց անցած էր :

Տղայ մը իր ընկերներուն սիրելի ըլլալու և անոնց բարեկամութիւնը ձեռք բերելու համար պէտք է աղնիւ ըլլայ անոնց հետ և յարդէ զանոնք :

6. Առաջ . Անոնք որ ուրիշները կը ծաղրեն , աւելի զեշ են յանոնք որ կը ծաղրուին :

5. Խօսսացութիւն . — Յարգանմ դէպի ընկերական հասաւառքիւնները . — Գիտէք որ թէ՛ քաղաքներու , թէ՛ գիւղերու մէջ մարդիկ կան որ գիշեր ցորեկ կը պատաին , կը հակեն որ գողութիւն մը չըլլայ , որ մարդիկ իրարու գէշութիւն մը չընեն , իսկ երբ մէկը գողութիւն ընէ կամ մէկու մը վնաս մը հասցնէ , կը բանեն այն մարդը , կը տանին բանալ կը դնեն , կը պատմեն : Այդ մարդիկներէն շատերը սուր մ'ունին որ կապուած է իւրենց մէջքը , շատերը կը նասին մեծ շէնքի մը մէջ և ո'վ որ երթայ իրենց բոլոքէ , մտիկ կ'ընեն :

Հապա այնպիսի վայրենի երկիրներ կան ուր ամէն , մարդ իր ուղածը կ'ընէ , ուրիշները կը կողուպաէ և ուղաշտապանող մը չկայ : Մենք շատ ուրախ ըլլալու ենք որ այն մարդիկ մեր երկիրը կը պաշտպանեն , ուրիմն պէտք է յարգենք զանոնք , պէտք է պատմւ ընենք անոնց , որովհետեւ անոնք կը պաշտպանեն մնդ :

7. Առաջ . Երբ ծառ մը միս մինակ է , հովլը կը փյէ և կը բափէ անոր տերեւները , այսպէս ալ երբ մարդ

միսմինակ է եւ պաշտպան չունի , կը վնասուի :

8. Առաջ . Պէտք է աշխատին ու մեր ձեռքին եկածը ընենք ուրիշներուն օգնելու համար :

9. Խօսսացութիւն . — Բարեգործութիւնը . — Տիկին մը ճամբուն վրայ հանդիպեցաւ պղտիկ՝ կայտառ տղի մը , որ ձեռքը իրեն երկնցուց բան մ'ուղելու համար : Բարի տիկինը անոր ձեռքը դրաւ տասը փարանց մը , յետոյ բաւաւ , «Տղա՛ս , դուն առողջ ես ու չեմ կարծեր որ ծոյլ ըլլաս , քեզի համար ամօթ է որ փողոցները կեցած՝ ուրիշներուն ձեռք երկնցընես , եկո՛ւր ինձի հետ մեր տունը , հոն մեր սպասուհին կ'օգնես , փայտ կը բերես , գետինը կը մաքրես ու ես ամէն օր քեզի ստակ կուտամ : Այսպէս , փոխանակ մուրալու , քու աշխատութեամբ կը վաստիխս ու առած ստակդ կը տանիս մօրդ»: Տղան շատ ուրախ եղաւ : Բարի կինը չթողուց որ անի մուրացկան ըլլայ և տղան աշխատելով մարդ եղաւ :

9. Առաջ . Աւելի աղեկ է որչափ պէտք է այնչափ տալ , յան թէ շատ տալ :

7. Խօսսացութիւն . — Ընկերական կեանի ուրախութիւնը . — Մարդ այնքան շատ բարեկամներ կը գտնէ , որչափ աւելի շատ ընկերներու մէջ ապրի , շատերուն հետ յարաբերութիւն ընէ . ասոր «Ընկերական կեանք» կ'ըսեն : Ընկերական կեանքը մարդուս շատ ուրախութիւններ կը պատճառէ , մարդ բարեկամներ կը շահի , որոնց կը պատմէ իր ցաւերը և ուրախութիւնները :

Ես պղտիկ ատենս ընկերակից մ'ունէի Սեղբաք անունով : Այս տղան միշտ կ'ուզէր առանձին մնալ , ընկերներուն հետ չէր ուղեր տեսնուիլ : Իր հայրը ուղեց անոր այս գէշ բնաւորութիւնը ուղղել , ուստի ծառայիր

մը հետ մէկաել զանի զրկեց իր մեծ աղարակը : Հոյ Սեղրաք առանձին մնաց . միսմինակ կը պողաէր ծառերու տակ , գետին եղերքը կը կարդար , կը դժէր , ու մինակ ձաշի ժամանակ ծառային երեսը կը տեսնէր :

Սեղրաք նախ շատ ուրախ եղաւ այս առանձին կեանքէն , զետէն ձուկ որավու համար կեռ և ուռկան շնեց ու կը զբաղէր : Բայց շատ չանցած՝ սկսաւ ամէն բանէ ձանձրանալ , ու տունը , քաղաքը , ընկերները միաքը ինկան :

Սեղրաք ուղեց իր ընկերներուն նամակ դրել , բայց այնքան հպարտ էր որ միտքը փոխեց նորէն : Հիմա ի՞նչ ընկեռ էր , միսմինակ՝ ծառերն ալ , գետափն ալ , դաշտերն ալ իր աչքէն ինկան . սկսաւ տրամիլ . չէ , ա՛լ անսանելի էր այս մինակութիւնը : Սեղրաք սկսաւ սասափիկ կարօտանալ տունը , ընկերները :

Վերջապէս ելաւ նամակ մը գրեց հօրը և խնդրեց որ զինքը ետ կանչէ :

Հայրը համացաւ որ տղան զղջացած է , ետ բերաւ զայն : Սեղրաքին սիրով շատ հանգստացաւ և սկսաւ ուրախանալ իր ընկերներուն մէջ : Այս ատեն համացաւ թէ առանձին ասպիրլ ի՞նչ գէշ բան է եղեր , և ընկերութեան մէջ ասպիրլ ո՛բչափ աղեկ :


10. Առած. Երէ մարդիկ հողը չմշակեն , անոր վրայ փուշերու անվիտան խոտեր մինակ կը բուսնին . այսպէս ալ երէ մարդ միս մինակ ապրի , իր զգացումները չեն մշակուիր եւ եսաւեր ու ծոյլ կ'ըլլայ :

11. Առած. Չար բաներէն միշտ հեռացե՛ք , բարի բաները սիրեցե՛ք :

8. ԽՈՍԱԿՑՈՒԹԻՒՆ . — Ընկերականութիւնը բարոյականացուցի է . — Երբ տղայ մը յանցանք մը գործէ , անմիջապէս չորս կողմը կը նայի թէ մէկը զինքը տեսաւ :

թէ ոչ : Հսել է թէ ընկերները մեղ կը զգուշացընման գէշ բան մ'ընելէ : Հսել է թէ մենք , երբ իրարու հետ ապրինք , կը ջանանք որ մէկը գեշութիւն մը չտեսնէ մեր վրայ :

Երբ ուսուցիչը ձեղմէ մէկը գոյլէ դասարանին մէջ և ուրիշներուն իրեւ օրինակ ցուցընէ , որչափ ուրախ կ'ըլլայ անի և անկէ ետքը որչափ կ'աշխատի որ նորէն այդ գովեստին արժանանայ : Դպրոցին այս զրասեղաններուն վրայ է որ գուք ամէնէն առաջ կը մտածէք աղեկ ըլլալ , լաւ աշխատիլ ընկերներու օգնել , կը խորհիք որ գէշ բան մը չընէք , որ չըլլայ թէ ձեր ընկերները ձեղի՝ գէշ տղայ է , ըսեն : Այսպէս է աշխարհի մէջ ալ : Երբ մեծնաք , մարդ ըլլաք , պիտի ուղեք միշտ աղեկութիւն ընել , միշտ օգասակար ըլլալ , որ մարդիկ ձեղի համար «աղեկ է » ըսեն , ձեզ գովեն՝ սիրեն : Ուրեմն ընկերներու մէջ ասպիրլ , ընկերական կեանք ունենալ մարդք բարի կ'ընէ , ուրիշ խօսքում մարդք պարկեշտ ու բարոյական կ'ընէ :



ԱՄՓՈՓՈՒՄ ԵՐՐՈՐԴ ԱՄՍՈՒՅՆ

Յայսնի է որ բոլոր մարդիկ իրարու համար կ'աշխատին , իրարու օգասակար կ'ըլլան , ասոր համար մեր պարտին է որ սիրենք բոլոր մարդիկը և մեր ձեռքէն եկածը ընենք անոնց օգասակար ըլլալու համար՝ պէտք է աշխատինք անուշ ու ազնիւ բնաւորութիւն ունենալու : Պէտք է սիրենք մեր ընկերները և ամենեւին չծիծավինք անոնց սիալներուն վրայ , չծաղրենք զաննիք : Պէտք է յարգենք այն մարդիկը որ մեր կեանքի ապահովուենան համար կը նակեն : Ազգասներուն համար բարեսիրու ըլլալու է և անոնց սորվեցնելու է որ աշխատին : Ծնկերական կեանքը մեղի շատ բարիքներ կուտայ , պէտք է սիրենք զայն և աշխատինք ուրիշն օգասակար ըլլալու :



ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ

— առջու —

1. Գ.Ս.Ս. — ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔՈԼԵՇՄԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ընդհ. Քուէարկութեան վրայ խօսեցանք նախորդ դասի մը մէջ (Բ. Պրակ, էջ 10) : Այդ գործողութիւնը կատարելու համար, քուէրդը կը զրկուին թաղեցիներուն, որտնք իրենց յարմար դատած անձերուն անունը գրելով՝ անձանի կը տանին կամ նամակով կը զրկեն եւ կեղեցի :

Ուսուցիչը այս գործողութիւնը տղոց աւելի աղեկ հասկցնելու առիթ մը կը փնտուէր, և ահա այդ առիթը ինքնաբերաբար ներկայացաւ :

2. Օր մը զպրոցին տղաքը իրարանցումի մէջ էին : Որոշուած էր նոյն օրը պատցիս ելլեւ, բայց տղաքը չէին կրնար համաձայնիլ թէ ո՛ւր երթալու էին աւելի լաւ զուարձանալու համար : Մէկը՝ այս ինչ տեղը երթանք, կ'ըսէր, միւսը՝ այն ինչ տեղը :

«Ի՞նչպէս լնելու ներ, Պ. Դաստիարակ, համաձայնութեամբ տեղ մը լնորելու համար :

— Շատ պարզ է, տղաքս, ըստա դաստիարակը : Քուէարկութիւնը ըրէք ամէնքր ալ մանր թղթերու վրայ զրեցէր ձեր ուզուծ տնկին անունը : Մէծ մասը ո՛ր տեղ որ զրած ըլլայ, հոն կ'երթար :

Տղաքը սառվ ա՛լ տրանշելու պատճառ չունեցան . բայց նաև սորվեցան թէ ինչ բուէարկելի :

4. Ի՞նչպէս կ'ըլլայ բուէարկութիւնը : 2. — Ուսուցիչը ի՞նչպէս քաղաքացւեց բուէարկելու եղանակը : (Պատճեցէր զպրոցին մէջ պատահածը) :

2. Գ.Ս.Ս. — ԿԱՌԱՋԱՐՈՒԹՅՈՒՆ

1. Նախարարութիւններ . — Բ. Պրակ, Դաս 4ին մէջ ըսկինք թէ պետութեան գործերը վարող պաշտօնատարաներէ կը կազմուի կատալարութիւնը : Այդ պաշտօնատարանները կ'ընտրէ Վեհական Կայութը : Այսոր իրատեղով կը անօրինուին պետութեան ամէն գործերը, և այդ պաշտօնատարաններուն հրամանները յարգելու պարտաւոր է ամէն մարդ :

2. Այդ նախարարութիւններն են .

1. Մեծ Եպարքոս (Սատր'զոմ)
2. Կրօնապետ (Եկիլ իւլ իսպան)
3. Դաստիարակն Դորժերու նախարար (Ասլիյէ նազորը)
4. Պատերազմական նախարար (Հարավիյէ նազորը)
5. Ծովալին նախարար (Պահելիյէ նազորը)
6. Պետական Խորհուրդ (Ծուրախ Տեօվլէր)
7. Ներքին Դորժերու նախարար (Տախիլիյէ նազորը)
8. Կառավարու (Եզզամ »)
9. Արտաքին (Խորինիյէ »)
10. Ելմուկան (Մալիյէ »)
11. Կրթական (Մէարիմ »)
12. Առևտրական և հնանգուու շինութեանց նախարար (Թիմարէր վէ նամաւա նազորը)
13. Անտառներու, հանքերու և երկրագործութեան նախարար (Օրման, մատեն վէ զրաքար նազորը)

3. Գլխաւոր նախարարները (Ախքելա) գումարուելով կը կազմին նախարարներու Խորհուրդը (Մէծիսի խասաց Վիլքելա) որ կը անօրինէ Պետութեան կարեւոր գործերը:

1. Որոնցմէջ կը կազմուի կառավարութիւնը . — Ո՞վ կ'ընտրէ նախարարները . — 2. Որո՞նք են զիսաւոր նախարարները . — 3. Որոնցմէջ կը կազմուի նախարարներու խորհուրդը, եւ ի՞նչ տեսակ գործեր կը սնօրինի :

3. Գ.Ս. — ՎԵՐԱՏԵՍՉՈՒԹԻՒՆՆԵՐ

Եւ Երկրորդական Նախարարութիւններ

1. Վերատեսչութիւններ. — Այս գլխաւոր նախարարութիւններն զատ, կան այլեւայլ վերատեսչութիւններ և պաշտօնատարաններ ալ.

1. Թերամօթարանի վերատեսչութիւն (Թօրիանէ Միւսիրի)
2. Թղթատուրական » (Փօրս վէ Թէկէկրամ)
3. Տուրքերու » (Վէրկի Էմանելի)
4. Մարսային » (Բուսումար »)
5. Մարգանամարի » (Նուժուս Խարէսի)
6. Կալուածներու » (Էմէսէֆ »)
7. Խորհրդական Մեծ-Հայոքոսութիւն (Միւսրէւար Սասրը ալի)
8. Տափարական Տեսչութիւն (Մարզուար Խարէսի)
9. Կայս. Անձն. Դանճին Նախարար. (Խաջինէի Խասաս)
10. Կրօնական Դորժերու » » (Մէկանիկ Միւսիրիէրի)
11. Ռատիկանական Նախարարութիւն (Զասրիյէ Նազըրը)
12. Փողերանցի վերատեսչութիւն (Զարպինանէ »)
13. Նաւահանգստի » (Լիման Խսարէսի)
14. Կայս. Դիտարան (Բասարիանէ)
15. Հնութիւններու Թանգարան (Միւլիսինէ)

1. Երկրորդական Վերատեսչութիւնները որո՞նք են: (Բացատրել թէ ինչ գործեր կը անօրինեն անոնք):

4. Գ.Ս. — ՕՐԵՆՔԸ

1. Օրենք. — Երբ ձեր ծնողքը այս լինչ բանը ընել կը հրամային կամ կ'արգիլին ձեզի՝ չեք ուզեր սնունց վիշտ պատճառել, և կը հնագանդիք:

2. Այսպէս է նաև երկրի մը ժողովուրդին համար: Բարի քաղաքացին ա՞ն է որ կը հնագանդի Օրէնքին և հաւատարմութեամբ կը կատարէ զայն:

3. Օրէնքները մեր ամի՞նուն օդախն համար դրուած են և մեծ յանցանք է անոնց դէմ գործել:

4. Զաղացականի մը որդին, Սարգիս, տանը հինգ տարեկան տղայ մ'էր. չար չէր, բայց մէկ պակասութիւն մը ունէր որ իր ծնողներուն շատ զժուար կուզար. — անհնազնոդ էր և կարելի չէր եղած զայն ուղղել՝ ո՞չ յանդիմանութեամբ, ո՞չ պատիժով:

Դպրոցին մէջ ալ նոյնն էր. Սարգիս ինչպէս ծնողին՝ այնպէս աւ վարժապետին խօսքը մտիկ չէր ըներ և շատ անզամներ ասոր համար պատժուեցաւ:


Երբ մեծցաւ ու մարդ եղաւ, այն առեն էր որ հասկցաւ թէ պէտք է Օրէնքներուն հնագանդիլ:

Շատ անզամ, պաշտօնական լրացիններու մէջ կամ պատերուն վրայ ժողովուրդին օգոստար բաներ կը ծանուցանէր Թաղապետութիւնը ։ Սարգիս փոյթ չէր ըներ անոնք կարդալու, սորվելու, գործարրելու ։ Աս անհոգութեան զնի տուու իր շունը՝ Թօմազիլը: Հրաման ելած էր որ շուն ունեցողները փոյլոց չհանեն, վասնգի գեղին մօտերը կատադ շունե մը տևանուեր է որ գեղին շուները խածեր վիրասորեր է:

Սարգիս իր Թօմազիլը փոյլոց համած էր, մէկ մ'ալ խեղճ կենդանին արիւնթամախ տուն գարձաւ:

Այն առեն միայն հասկցաւ. Սարգիս թէ պէտք է հրամաններուն հնագանդիլ. բայց բանը բանէն անցած էր: Հարկ եղաւ պանանէլ Թօմազիլը, որպէսզի ուրիշ շուներու ալ չուոյ իր հիւանդութիւնը :

1. Ի՞նչ բնել պարտի ձեր ծնողին. — 2. Բարի հաղափացին ի՞նչ կ'ընէ. — 3. Ինչո՞ւ հնացանդիլու ենք օրէնքին. — 4. Պատմեցէ Սարգիսին եւ իր Շան պատմութիւնը :



ՀԱՅ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

1. ԴԱՍ. — ՀՈԳԵԳՈԼՈՒՑ

Ա. Հոգեգալուս. — 1. — Յարութիւնէն քառսուն օր ետք, երբ Քրիստոս Երկինք համբարձաւ, արդէն խոստացած էր Ս. Հոգին առաքեալներուն զրկել որ զանոնք լուսաւորէ ու հրահանդէ: 2. — Մատնիշ Յուղային տեղ, Մատաթիան առաքեալ ընտրուեցաւ: 3. — Երբ յիսուներորդ (Պենտէկոստէ) օրը, Համբարձումէն 10 օր ետք, ժողվուած էին վերնատան մէջ, սաստիկ շարժում մ'եղաւ, և Ս. Հոգին հրեղէն լեզուներով իջաւ առաքեալներուն վրայ: Առաքեալները Ս. Հոգին ընդունելով՝ սկսան զանազան լեզուներ խօսիլ:

4. — Թագէռոս առաքեալ այս միջոցին գնաց Հայերուն մէջ, Տիրոջ խոստման համեմատ, և սկսան քարոզել: Հաւատացեալներն առաջին անդամ Անտիոքի մէջ քրիստոնեայ ըստեցան:

5. — Այս տօնին կ'երգուի «Առաքելոյ Աղաւնոյ» շարականը, ու կը կարդացուի Ներսէս Լամբրոնացիին դրած մէկ սքանչելի ճառը:

Զ. Առաքեալներուն գործերը. 1. — Մատթէռոս ու Յովհաննէս առաքեալներն ու աշակերաններէն Մարկոսն ու Ղուկասը զրի առին Յիսուսի Քրիստոսի կեանքն ու աստուածային պատուէրները՝ չորս Աւետարանի մէջ:

Առաքեալները Ս. Հոգիին ներշնչումով սահմանեցին որ Քրիստոնեաները շաբաթ օրուան տեղ կիրակին սուրբ պահէն իրեւ յիշատակ Յիսուսի Յարութեան և Ս. Հոգիին վերնատուն իջնելուն:

2. — Առաքեալները Քրիստոսին սորվելով եկեղեցին խորհուրդներն ու արարողութիւնները՝ սահմուեցին իւրինց յաջորդներուն, և յրուեցան աշխարհիս զանազան աղջերուն մէջ, արածելու Քրիստոսի Ս. Աւետարանը: 3. — Յովհաննէսին զատ, առաքեալներն ամէնքն ալ Յիսուսի անունին համար նահատակուելով մեռան:

Քրիստոս ի՞նչ խոսացաւ. — Յուդայի տեղ ո՞վ ընթրուեցաւ. — Սուաթեալներն երբ Ս. Հոգին ընդունեցին ի՞նչ ընել սկսան. — Ո՞վ է Հարոց առանեալը. — Այս տօնին ի՞նչ կ'երգուի. — Որո՞նք գրի առին Յիսուսին կեանքը. — Սուաթեալները եկեղեցին խորհուրդներն ուրկէ սորվեցան. — Սուաթեալներն որո՞ւ անունով մեռան:

2. ԴԱՍ. — ՎԵՐԱՓՈԽՈՒՄ

Յ. Տիրամօր մահը. — 1. — Յիսուս խաչին վրայէն պատուիրեց Յովհաննէս առաքեալին որ իր մօրը իննամք տանիք: Այն օրէն ետքը, մինչև 16 տարի շարունակ, Մարկիամ Սաստածամազը Յովհաննէսին քով կցաւ:

2. Երբ Ս. Կոյար մեռաւ, առաքեալները թաղեցին վինքը Գեթսեմանի ձորը, ուր Յուղա վինուորներուն ձեռքը մատնած էր Յիսուսը: Աստուածածնի մահուան տաեն, Բարթուղիմէսս առաքեալը ներկայ չէր:

3. Երբ Բարթուղիմէսս Երուսաղէմ նկաւ ու խմացաւ Տիրամօր մահը, շատ արամեցաւ, եւ ուղեց տեսնել անոր գերեզմանը: Առաքեալները Գեթսեմանի պարսէղը տարին զինքը, բայց որքան զարմացան Երբ գերեզմանը բացին ու պարապ գտան, ինչու որ Յիսուս հրեշտակներու ձեռքով իր մօր մարմինը Երկինք տարեր էր, այսինքն «վերափոխեր» էր:

4. Բարթուղիմէսս շատ կը ցաւէր որ Տիրամազը չը կրցաւ տեսնել: Միւս առաքեալները զինք միսիթարե-

լու համար, Աստուածածնի պատկերը ընծայեցին անոր : Բարթուղիմէս առաքեալը վանք մը շնուց և այս պատկերը հոն դրաւ :

5. Վերափոխումի տօնը հանգիսաւոր կը կատարուի Հայ եկեղեցիներուն մէջ և Աստուածածնէն կը խնդրենք որ բարեխօս ըլլայ իր որդի Յիսուս Քրիստոսին . ասոր համար կ'երգենք .

« Փառասորեալ եւ օրհնեալ միշտ սուրբ կրյս Աստուածածին Մարիամ, մայր Քրիստոսի, մատո՛ զադաշանս մեր որդույ քո եւ Աստուածոյ մերոյ » :

Աստուածածնի շարականն է « Անկանիմք առաջի քո Աստուածածին », եւայլն :

6. Վերափոխման տօնին, Խաղող կ'օրհնուի եկեղեցին մէջ :

Տիրամայրը որո՞ւ նով մնաց մինչեւ իր մամբ . — Ո՞ւր քաղուեցաւ . — Բարուղիմէս՝ երբ Երևաղէմ եկաւ, ի՞նչ լրաւ . — Առանձակները ի՞նչ տուին անոր . — Ի՞նչ կը խնդրեմ Աստուածածին : — Ո՞րն է Ս. Կոյսին շարականը . — Խաղողը ե՞րբ կ'օրհնուի :

3. ԳԱ.Ս. — Ս. ԱԲԳԱՐ

4. Ս. ԱԲԳԱՐԻ հիւանդուրիւնը . — 1. Աբգար հիւանդուրիւն մը ունեցաւ որ եօմը տարի տեւեց և ամէն դեղ գործածեր՝ բայց չէր առողջացեր: Աբգար լսեց որ Հրէատուանի մէջ Յիսուս ամէն հիւանդուրիւն կը բժշկէ առանց դեղի: Եսամակ զրեց Յիսուսին որ դայ և զինքն ալ բժշկէ : Ահա այդ նամակը .

2. « Լսեցի որ դուն առանց դեղի կը բժշկես հիւանդուրը, կոյրերուն աչքը կը բանաս, կաղերը կը քալեցընէս, բարուները կը բժշկես, սատանաները կը հալա-

ծես, երկար ատեն հիւանդ եղողներն ալ կ'աղէկցընես ու մինչեւ անգամ մեռելները կ'ողջըցնես : Աս բաները լսելով՝ ինքնիրենս ըսի որ երկինքէն իջած Աստուած ես դուն և կամ Աստուծոյ որդին ես: Կ'աղաչես, ելի՛ր հոս եկուր, իս բժշկէ: Նոյնպէս լսեցի որ Հրէաները քեզ կը նեղեն . ես պղտիկ կալուած մ'ունիմ, իմ քով եկուր, երկուքիս ալ կը բաւէ իմ ունեցածս և հոս մարդ չենեղեր քեզ : »

3. Աբգար աս նամակը յատուկ մարդոց ձեռքով զրբկեց և անսուց պատուիրեց ու լսաւ. « Եթէ Յիսուս ձեզի հետ չկրնայ գալ, անոր պատկերը քաշեցէք ինձի բերէք . » ու իր հրաւիրակներուն հետ նկարիչ մ'ալ զրկեց:

Ի՞նչպէս մարդ էր Աբգար : — Ասկէ խնի՞ տարի առաջ կ'ապրէր: — Ի՞նչ գրեց Յիսուսին : — Հրաւիրակներուն ի՞նչ պատուիրեց :

4. ԳԱ.Ս. — ՊԱՍՄՈՒԾԱԿԸ

5. Յիսուսի պատախանը . — 1. Հրաւիրակները նամակը Յիսուսին տարին : Ան չկրցաւ գալ և սա պատախանը զրեց Աբգարին .

« Երանի՛ անոր որ զիս չէ տեսեր՝ բայց կը հաւատա ինձի : Կը զրես որ քու քով զամ : Չեմ կրնար, ինչու որ ես հանգիստ ապրելու համար չեմ եկած՝ այլ չարչարուելու, խաչուելու : Երբ աս գործերս լմացընեմ, Հայր Աստուծոյ քով պիտի երթամ : Բայց իմ համբարձումէս վերջը, աշակերտներէս մէկը կը զրկեմ որ դայ քեզ բժշկէ և քու ժողովուրդիդ ալ կեանք պարզեւէ: »

2. Պատուիրակներուն հետ գացող նկարիչը երբ տեսաւ որ Յիսուս չի զար, սկսաւ անոր պատկերը գծագրել, բայց չէր կրնար : Յիսուս իր մօտը կանչեց նկարիչը, կաոր մը ճերմակ կտաւ առաւ, իր երեսին մօտեցուց և

ահա նոյն կտաւին վրայ նկարուեցաւ իր պատկերը : Յիսուս այդ պատկերը տուաւ նկարիչն որ Սբգարին տանի :

Աս պատկերն է ահա դաստանակ կամ անձեռագործ պատկեր ըստածը :

Հրատիրակները ո՞ւր զային. — Յիսուս ի՞նչ պատասխան տռաւ Աքաղարի նամակին. — Պատմեցէք քէ ի՞նչպէս նկարուցաւ Յիսուսի պատկեր՝ մասուր կտակին վրայ:

5. ԴԱՍ. = ՀԱՅԵՐՈՒՆ ԱՌԱՋԻՆ ԴԱՐՁԵ

¶. Θωαὶκου Σωμετούσι απωλόθιν Ιουνιανορθώδη. — 1.
Σωμετούσι 2492 απωρή φροντίδηροι καὶ ηποτεφρέποι αργάκειοι-
θειαν αιωλή θεωρήσιν μήνυξε πρ., Φριμωποι ζωμέρωδοι μήν
καιρού, θωαὶκου απωλόθιν Σωμετούσι μήδε λέκαιοι, Φριμ-
ωποι 34 θειανθειανθίνοι, καὶ φριμωπάνεκτοι θειανθίνοι φριμωπάκοι :

Զ.—Երբ Թաղէսոս մտաւ Արգարի ապարանքը, Արգար
երեսի վրայ լնկաւ, երկրպագութիւն ըրաւ : Թաղէսոս
քրիստոնեայ ըրաւ Արգարն ալ և իր քաղաքացիներն ալ:
Զեռքը դրաւ Արգարին դլխուն և բժշկեց, նոյնպէս շատ
մը հիւանդներ: Ասոր վրայ շատեր Քրիստոսի հաւատա-
ցին և մկրտուեցան: Թաղէսոս ուրիշ տեղեր ալ պիտի
երթար քարոզելու, ուստի թագ շնոր Սդգէ անուն
անձը եպիսկոպոս ձեռնադրեց և անցաւ գնաց Ս. Արգա-
րի քեսորդի Սանատուկին քով, և ան ալ իր մարդե-
րովը քրիստոնեայ ըրաւ մկրտեց: Նոյնպէս և Սանատ-
ուկին աղջիկը՝ Սանդուխտը:

3.—Սանսալըուկ Արգարի մահէն վերջը նորէն կոսպաշտ եղաւ և սկսաւ նահատակել քրիստոնեաները : Սանդուխափն ալ ըստ որ ուրանաց նոր կրօնքը , բայց անչնազանդեցաւ , ըսելով « Ես կուռք չեմ պաշտեր . Կը

մեռնիմ՝ բայց կուռք չեմ պաշտել »։ Հայրը իր աղջկին
այ, Թագէսս առաքեալն ալ նահատակել տուաւ :

Այսպէս՝ թէ՛ ուստւցիչը (Թագէոսը) և թէ՛ աշակերտուհին (Սանդուխտ կոյսը) յօժարեցան մեռնիլ՝ քանի թէ կուռքերուն երկրպագել :

Հայեր Քրիստուկն առաջ խնի՞ սարի կոպակաց մենցին : Համբառձուլէն եսիր ո՞վ եղաւ Հայերուն ոով : — Ի՞նչ քրաւ Թադէս Հայերուն մէջ : Ո՞վ էր Աղդէ եւ ի՞նչ եղաւ : Ո՞վ էր Սահարուկ . իսկ Սանդո՞վիս : — Սահարուկ ի՞նչ քրաւ Արգարի մատէն եսիր : Ի՞նչ հրանան տռաւ Սահերուսին : Ա՞ն ինչ քրաւ : Ի՞նչ վախճան ունեցան Սանդովիս ու Թադէս :

6. Դիլ = Ա. Ըստը Կայսեր


1. Առաջին լուսաւոխներ . — Թագէսով մահէն վեր , Յիսուսի առաքեալներէն Բարթոլոմէոսն ալ եկաւ յերուն մէջ և քարոզեց քրիստոնէութիւնը : Իր հետք Ս. Կոյս Մարիամին պատկերը (20 Դաս, 40 հատած, էջ 13-14) . Տիղրիս գետին եղերքը վանք մը չե՞ն Աստուածածին անունով՝ և այն պատկերը հոն դրաւ

2. Ա. Թաղէսու և Բարթողիմէսու առաջին անգամ
եկան մեր կողմերը քրիստոնէութիւնը քարոզելու
Հայերը լուսարդելու։ Ասոր համար զանոնք կ'անուա-
նենք առաջին (ասիլին) լուսարդիցներ։

3. Անոնք մեզի գեղեցիկ օրինակ տուած են Քրիստոսի սլաքուն ու անձնութբութեան համար, մենք ալ ամբի՞ն տարի անոնց անունը կը յիշենք եկեղեցին մէջ և կը աօնենք: Նոյն օրը կ'երգենք սա չարականեղը:

«Հայրատունի այբովն իրեղին պարիսպը և. բարձր աշտարակը, ուկեղին բաժակ և. միք մատուռակը մերսգնեաց, հա՛ր հոգեւորը, Բարբուդիմես և. Թագիւո, բարեխօս իերուր առ. տէր վասն անձանց մերց» :

Առ Դալբոց, Գ. Պատկ



Թագաւոր երկնաւոր, Զեկեղեցիք քո անշարժ պահեա' Եւ գերկըրպագուս անուանը քում Պահեա' ի խաղաղութեան:

Թադէուսն եսքր ո՞վ եկաւ մեր մէջ , նիտք ի՞նչ բերաւ, ո՞ւր դրաւ Ա. Կոյսին պատկերը: — Ի՞նչ ըսել է Լուսաւորիչ: — Ինչո՞ւ Թադէուս եւ Բարրուղիմէու « նախկին լուսաւորիչ » կ'ըսուին: — Ի՞նչ կ'ընենք անոնց լիւասակին համար: — Ի՞նչ շարական կ'երգենք Թադէուսի եւ Բարրուղիմէուի տօնին օրը :

7. ԴԱՍ

ՀԱՅՈՑ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԴԱՐՁԸ , Ա. ԳՐԻԳՈՐ ԼՈՒԽԱՆՈՐԴ

1. Հայոց բոլորական դարձն եղաւ 311 ին Ա. Գրիգոր Լուսաւորչի ձեռքով որ Սնակին տղան էր: Ա. Գրիգոր Եւթազ անուն մէկու մը ձեռքով Կեսարիա տարռելով՝ հոն ուսում սորվեցաւ:

2. Ա. Գրիգորի չարչարակն ծրդատ Հոռոմի մէջ հեթանոսական գաղափարներով մեծածած եւ քրիստոնէութեան ուսերիմ թշնամի էր: Երբ Հոռոմէն եկաւ հիմակուան Երզնկա քաղաքը , իմանալով որ Ա. Գրիգոր քրիստոնեայ է , ուզեց զայն տանջանքներով ստիպել որ քրիստոնէութիւնը թողու: Անահիակն զոհ մատուցած ատեն , Տրդատ հրամայեց Գրիգորին որ ինքն ալ նոյն չաստուածուհին ծաղկէ պասկ նուիրէ:

3. Խոր վիրապ մենելը. — Երբ Գրիգոր յանձն չառաւ , Տրդատ Երկարօրէն հարցուափորձելէ ետք , զանազան դառն ու անսանելի տանջանքներով ուզեց անոր հաստատամտութիւնը խախտել , բայց անկարելի ըլլալով՝ Տրդատ հրամայեց որ գուք մը նետեն: Այսուհետեւ բոլոր քրիստոնէաներու դէմ սաստիկ հալածանք հանեց :

Հայեր ամբողջիմն ե՞ր Քիյսոնեայ եղան : — Ո՞վ էր Տրդատ : — Ո՞ւր կ'ապրէր : — Ո՞ւր եկաւ Գրիգորին նիս : — Ի՞նչ է Անահիտ: Ո՞ւր իր գտնուէր: — Ի՞նչ քրաւ Տրդատ: — Խալ Գրիգոր: — Ի՞նչ հրամայեց Տրդատ : — Ի՞նչ ըսել է խոր վիրապ:

8. ԴԱՍ. ԱՄՓՈՓՈՒՄ Գ. ԱՄՄՈՒԽԱՆ

Հազերաւուս. — Յարութենէն 50 օր ետքը , առաքեալները վերնատուն հաւաքուած էին: Ա. Հոգին իջաւանոնց վրայ և սկսան զանազան լեզուներ խօսիլ: Թագէու Հայերուն մէջ եկաւ և քարոզեց: Մատթէոս , Յովհաննէս , Մարկոս և Ղուկաս զրեցին չորս աւետարանները : Առաքեալները որոշեցին կիրակի օրը սուրբ պահէլ և ոչ թէ շաբաթ : Ետքը ցրուեցան ամէն կողմ և տարածեցին քրիստոնէութիւնը :

Ա. Երափոխում: — Տիրամայրը մեռնելուն , աշակերտները զինք թաղեցին: Հրեշտակներ անոր մարմինը երկնք վերափոխեցին: Բարիթուղիմէոս Ա. Կոյսին պատկերը առաւ իբր ընծայ: Վերափոխումը կը տօնէ մեր եկեղեցին և խաղող կ'օրնէ նոյն օրը :

Ա. Սրբար , լսելով Յիսուսի անունը , անոր նամակ գրեց և յատուկ դեսպաններով հրաւիրեց որ գայ իր մօտ:

Պատառակի . — Յիսուս պատասխան զրեց թէ չի կրնար գալ: Իր պատկերը կտաւի վրայ առնելով՝ նըկարիչն հետ զրկեց Սրբարին :

Սուաշին դարձ . — Հայերը 24 դար կռապաշտ էին: Թագէոս եկաւ քրիստոնեայ ըրաւ զիրենք , Աղդէն եւ սիմկոպոս ձեռնադրեց: Սանաւրուկ ուրացաւ քրիստոնէութիւնը և նահատակեց շատ մարդիկ՝ նոյն խոկ իր աղջիկն ու Ա. Թագէոսը :

Ա. Բարբարիմէասը Թագէոսէն ետքը եկաւ հայերուն մէջ քարոզեց: Ասոր համար երկուքը կը կոչուին մեր Առաջին Լուսաւորիչները :

Հայերն ամբողջական դարձր եղաւ Գրիգոր Լուսաւորիչին ձեռքով: Տրդատ կրապաշտ էր, Անահիակին զոհ կ'ընծայէր: Գրիգոր մերժեց Անահիտը պաշտել , ասոր համար Տրդատ չարչարել ու խոր վիրապը ձգել տուաւ Ա. Գրիգորը :

ԱՃԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

—

1. ԴԱՍ. — Կ. ՊՈԼՍՈՅ ԹԱՂԵՐԸ (Շար.)

1. Գումար-Գափու. — Պղպայ հարաւակողմը Մարմարայի եղերքն է Գումար-Գափու։ Աս թաղվն մէջ կը բնակին Թուրքեր, Հայեր, Յոյներ։

Հոս է Մայր եկեղեցին, Պատրիարքարանը և Երուսաղէմատունը, ինչպէս և Պէղձեան Մայր վարժարանը։

Բուն Գումար-Գափուէն զատ, կայ Գումար-Գափուի Դուրսի թաղը, ուր ունինք Ս. Յարութիւն եկեղեցին։

2. Կէտիկ-Փառա. — Անոր վերի կողմը, բլուրին վրայ է Կէտիկ-Փառա թաղը, ուր Ս. Յովհաննէս Աւետարանին եկեղեցին և Ս. Մեսրոպեան վարժարանը։

3. Լանկա. — Հարաւակողմն է և երկու դուռ ունի. Տալուտ-Փաշա և Եէնի-Գափու։

4. Եէնի-Գափու. — Նոյնպէս Մարմարայի եղերքն է։

Հոս ունինք Ս. Թագէսու և Բարթողիմէսու Առաքեաներու անունով եկեղեցին, և վարժարանը։

5. Երկաթուղիի գիծը կը սկսի Սիրքէճիէն և Գումար-Գափուի ու Եէնի-Գափուի առջեւէն անցնելով՝ կ'երթայ Սամաթիս, Եէտի-Գուլէ, Մաքրիքէօյ և Ս. Սթէփանոս։

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ. — 1. Ո՞ւր է Գումար-Գափու։ Հոն ի՞նչ է եներ կան։ — Ո՞ւր է Ս. Յարութիւն եկեղեցին։ 2—4. Ո՞ր՞ն էն Կէտիկ-Փառայի, Գումար-Գափուի Դրսի և Եէնի-Գափուի եկեղեցիներն ու վարժարանները։ — 5. Ռումիլիի Երկարուղին Սիրթնին սկսեալ ո՞ր եղիք կայարան ունի։

2. ԴԱՍ. — ՊՈԼՍՈՅ ԱՐՈՒԱՐՉԱՆՆԵՐԸ.

6. Արուարձան ու Գեղ. — Պարխապէն դուրս գտնուող թաղերը կը կոչուին Արուարձան ու Գեղ։

Արուարձաններն են Կալաթա, Բերա, Խւակիւտար, Գապու-Քէօյ։

7. Կալաթա. — Պոլսոյ դիմաց, Ոսկեղջիւրի եղերքը, կը գտնուի Կալաթա՝ որ Ունդաբանի կամուրջին ծայրը Ազապ-Գաբու թաղէն սկսելով՝ կը տարածուի մինչեւ Գարաքէօյի կամրջին ծայրը Գարաքէօյ թաղը, անկէ ալ անդին մինչեւ Թօփհանէ ու Գապա թաշ թաղերը, Վոսկորի նեղուցին բերանը, Տղմա պահչէ թաղին քոլ։ Թրամուէյի գիծ մը կը սկսի Ազապ-Գաբուէն, ու ամբողջ Կալաթայէն անցնելէ ետք, կ'երկնայ մինչեւ Օղթաքէօյ։ Իսկ Գարաքէօյէն սկսելով՝ դէպ ի Բերայի թաղերը մինչեւ Շիշլի թրամուէյի ուրիշ երկու գիծեր։

8. Գարաքէօյի մէջ Փապուղի (քիննի) մը կայ. Առուրելուեայ կառախումընը զոյգ գիծերու վրայէ կ'ելլեն, կ'իջնեն, Գարաքէօյէն Բերա, Գուլէ-Գաբու։

9. Ղալաթիա է « Ս. Գրիգոր Լուսաւորիչ » եկեղեցին, որ Կ. Պոլսոյ Հայերուն ամնենէն հին եկեղեցին է։

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ. — 6. Ուր՞նի՛ Արուարձան ու գեղ կը կոչուին։

7. Ո՞ւր կը գտնուի Կալաթա. — Թրամուէի գիծն ո՞ւրիշ կրսկի. — Գարաքէօյի բրամուէի գիծը մինչեւ ո՞ւր կ'երկարի. — 8. Ո՞ւր կը գտնուի Փապուղին։ — 9. Հայեր Կալաթայի մէշ ո՞ր եկեղեցին ունին։

3. ԴԱՍ. — ԱՐՈՒԱՐՉԱՆՆԵՐԸ (Շար.)

10. Բերա կամ Պեյ Օղու. — Կը տարածուի Ղալաթիոյ վերև բլու մը սարանարթին ու կողերուն վրայ։

Ունի՝ Գուլէ-Գաբու, Թէփէ-Պաշի, Կալաթա-Սէրայ, Թագսիմ, Բանկալաթի, Շիշլի թաղերը։

Բերայի մէջ կը բնակին թուրքեր, Հայեր, Յոյներ ու Եւրոպացիներ :

11. Բուն Բերայի մէջ, Պալըդ - Փաղարի կողմի է « Ս. Երբորդութիւն » եկեղեցին, որուն շրջափակին մէջ է Բերայի Արհեստանոցը :

Թագսմի՞ մէջ « Ս. Յարութիւն » որ նախ փայտաշն էր և օրուն կից էր անցեալ դարուն վերջերը Աղջ-Հիւանդանոցը : Քանի մը տարի առաջ էսական վարժարանը շինուեցաւ հոս :

Բանկալթիի գերեզմանատան մէջ կայ « Ս. Գրիգոր Լուսաւորիչ » :

Ֆերի-գիւղի մէջ կայ « Ս. Վարդան » եկեղեցին :

12. Գասրմ - Փաւա - . — Բերայի բլրին ստորաբ, Աշպաւ - Գարուի քով, Ասկեղջիւրի եղերքն է Գասրմ փաշա : Մովեղերքը գրաւած է Թերահանէ կոչուած պիտական մէծ նաւարանը :

Հոս կը բնակին թուրքեր, Հայեր ու Յոյներ :

Ունինք « Ս. Յակոբ Մծբնայ » եկեղեցին :

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ. — 10. Ո՞ւր կը գտնուի Բերա . — Որո՞նք կը կազմեն Բերայի քաղեր . — Որո՞նք կը բնակին մէջ . — 11. Բերայի մէջ տանի՞ եկեղեցի ունինք . — 12. — Ո՞ւր է Գասրմ - Փաւա . — Հոս որո՞նք եկեղեցին կայ :

4. ԴԱՍ. — ՊՈԼՍՈՑ ԱՐՈՒԱՐՁԱՆՆԵՐԻ (Շար.)

13. Խասգեղ. — Գասրմ - Բաշայի կրնակը, Ասկեղջիւրի եղերքը կը գտնուի Խասգեղ :

Հոս կը բնակին թուրքեր, Հայեր, Հրեաներ ու Յոյներ : Խասգեղի Սիւտլինէի մէջ կը գտնուի Պետական « Գումարիսանէ » զինուորական վարժարանը :

14. Ունինք « Ս. Սահմանոս » հոյակապ եկեղեցին՝ որուն շրջափակին մէջ է Ս. Ներսէսեան փայտաշն հինաւուրց վարժարանը, որ ասկենօք մէծ փայլ ունէր : Դալլոյին դիմացը կը գտնուի « Գալֆաւեան » Որբանոցը :

15. Էյուալ. — Խասգեղի զիմաց, Ոսկեղջիւրի միւս եղերքը, արուարձան մ'է Էյուալ :

Վերի Էյուալի մէջ է « Ս. Եղիա » եկեղեցին :

Վարի Էյուալի մէջ է « Ս. Սասուածածին » եկեղեցին:

16. Գազը. — Պողոս հարաւ, արեւմտեան կողմը, Սամաթիոյ պարխապներէն գուրս, Մարմարայի եղերքն է Գազը : Մէջէն կ'անցնի Սիրքէծին մեկնող երկաթուղի գիծը որ կ'երկարի գէպ ի Մաքրի-քէօյ :

Գազըի կողմն է Ս. Յակոբի Որբանոցը :

Ունի գործարաններ : Տեղին բնակիչները կը կազմին Թուրք, Հայ, Յոյն ու Հրեայ :

17. Երկաթուղիի գծին վրայ, Եէտի-Գուլէն գուրս ևն « Ս. Փրկիչ » եկեղեցին ու Աղջ-Հիւանդանոցը :

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ. — 13. Ո՞ւր է Խասգեղ. — Որո՞նք կը բնակին .

14. Եկեղեցին ու վարժարաբ ինչպէս կը կոչուին . — 15. Էյուալի եկեղեցիները որո՞նք են . — 16. Ո՞ւր է Գազը . — Հոս ո՞վ կը բնակի եւ ինչե՞ր կան . — 17. Ո՞ւր է Ազգ. Հիւանդանոցը :

5. ԴԱՍ. — ՎԱՍԿՈՐԻ ՆԵՐԱԾՈՒՅԹԻ

18. ՎԱՍԿՈՐԻ ՆԵՐՈՒՅԹ. — 28 քմ. Երկայնութեամբ նեղ ծով մ'է որուն մէկ ծայրը, հիւսիս, Սև ծովուն ու միւս ծայրը, հարաւ, Մարմարա ծովուն միացած է: Վասկորի նեղուցն Եւրոպա և Ասիա ցամաքներուն մէջ տեղը կ'իյնայ և Ասիան Եւրոպայէն կը գտաէ :

19. ԵՐԼՈՒ ԵԿԵՐԵՔ. — Արեւմտեան եղերքը կը կոչուի Եւրոպական եգերքը ու արեւելեանը՝ Ասիական եգերք:

Եւրոպական եղերքը կը գտնուի, Օրթագեղ և անկէ անդին Արնալուտ քէօյ, Պէպէք, Ռումէլի Հիսար եւ ուրիշ գեղեր : Ասիական եղերքը կան Իւսկիւտար և անկէ անդին Պէլլէրպէքի, Գանտիլլի, Անատօլու Հիսար եւն : Վասփորի նեղուցէն ամէն օր նաւեր կ'երթեւեկեն Սեւ ծովէն դէպ ի Մարմարա և Մարմարա ծովէն դէպ ի Սեւ ծով :

20. Եւրոպական եզերք . — Գապաթաշէն ու Տօլմա Պազէէն անդին, Օրթագեղ չգացած՝ կը գտնուի Պէջիրքալ ուր կայ Ս. Աստուածածին եկեղեցին և Մաքրուհեան վարժարանը :

Օրբագեղի մէջ ունինք « Խնդրակատար Ս. Աստուածածին » եկեղեցին և վարժարանը :

Գաւրու Զէմէի մէջ է « Ս. Խաչ » եկեղեցին :

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ . — 18. Խօն է Վասփոր . ո՞ւր է մէկ ծայրը , մի՞ւր , — Վասփորի նեղուցն ո՞ւր կ'իյնայ . — 19. Ո՞ր կողմէն արեմբեան եզերք , և ո՞րն առեւելան կը կոչուի . — 20. Ո՞ր գեղերը կը գտնուի Վասփորի Եւրոպական եզերին . — Որո՞նք են Եւրոպական եզերին հայաբնակ գեղերը :



6. ԴԱՍ . — Վ.ՈՍՓՈՐ (Նար.)

21. Ռումէլի Հիսարի մէջ է « Ս. Սանդուխտ » եկեղեցին : Պօյանի գեղի մէջ է « Ս. Երից Մանկանց » եկեղեցին : Սրբենայի մէջ է « Ս. Յովհ. Կարապետ » եկեղեցին :

Եւնի գեղի մէջ է « Ս. Աստուածածին » եկեղեցին :

Պէօյիւմ եւրէի մէջ է « Ս. Հոռիսամէտ » եկեղեցին :

Ասիական եզերք . — Եէնի-Քէօյի դիմաց , ծովէն անդին , կը գտնուի :

Պէջօք ուր կայ « Ս. Նիկողայոս » եկեղեցին :

Գանտիլլիի մէջ է « Ս. Երկոտասան Առաքեալք » եւ կեղեցին :

Գուգիւնենուքի մէջ է « Ս. Լուսաւորիչ » եկեղեցին :

22. ՎՈՍՓՈՐԻ ԵԶԵՐՔԸ


Եւրոպական եզերք

Կամուրջէն՝ Թօփհանէ, Գապաթաշ , Պէշիքթաշ , Օրթագեղ , Գուրու չէլմէ , Արնալուտ քէօյ (7 քմ.) , Պէպէք (9 քմ.) , Ռումէլի Հիսար (10 քմ.) , Պօյանը քէօյ , Էմիրկեան (12 քմ.) , Սթէնիա (15 քմ.) , Եէնի քէօյ (16 քմ.) , Թարապիա (17 քմ.) , Պէօյիւք տէրէ (19 քմ.) , Մէզարպուռնու (21 քմ.) , Եէնի մահէ (23 քմ.) , Ռումէլի գավագ (24 քմ.) :

Ասիական եզերք

Վասփորի Սեւ ծովու բերնէն՝ Անատօլու գավագ (31 քմ. կամուրջէն) , Պէլլոզ (18 քմ.) , Բաչա պահէչ (17 քմ.) Զուպուգլը (15 քմ.) , Գանլըճա (13 քմ.) , Անատօլու Հիսար (11 քմ.) , Գանտիլլի (10 քմ.) , Վանի քէօյ (8 քմ.) , Պէնկէլ քէօյ (7 քմ.) , Պէլլէր պէչ (6 քմ.) , Գուզկունացուգ (5 քմ.) :

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ . — 21. Ո՞ր կը գտնուի Ս. Սանդուխտ եկեղեցին : — Ս. Երից Մանկանց եկեղեցին , եւն . — 22. Վասփորի երկու եզերք ո՞ր գիւղերը կան . — (Եինել հարտէսը և տեղերը նշանակել) :



7. ԴԱՍ . — ՊՈԼՍՈՅ ՆՇԱՆԱԽՈՐ ՇԵՆՔԵՐԸ

23. Յիշատակարաններ . — Ինչպէս գիտենք , հին ու նշանաւոր քաղաքէ Պոլլար , զոր առաջին անդամ հիմնած է Բիւզան անուն Աթենացին՝ կամ Արգիացին որ Մեգարացիներու ցեղագետ կամ հրամանատար էր : Ասոր համար է որ Պոլսոյ հին անունը Բիւզանիոն կ'ըս-

ուի : Հօն կը տեսնենք յիշատակարաններ , կոթողներ , հոյակատ չէնքեր , որոնց վրայ հետպհետէ նոր ու գեղեցիկ շինութիւններ աւելցուցած են Օսմանեան Սուլթանները՝ սկսեալ ֆաթիհէն մինչեւ մեր աշխարհաչէն ու մեծանուն կայսրը , ՍՈՒԼԹԱՆ ՀԱՄԻՏ ԽԱՆ Բ.

24. Ճին յիշատակարաններն են ԶԵմպէրի թաշ , Տիքիլի թաշ (օճակերպ սիւն որ Դելփիսէն բերուած է) , Դըզ դուէսի , (Վափորի նեղուցին բերանը) :

Շէնքեր՝ Պողոսողան քէմքը , Եէտի գուլէի աշտարակաւոր պարիսպները , Զիարձակարանը (Աթ մէյտան) Յուսոփինիանոսի պալատը՝ (Զաթլասը գափուի մօտ) , Թէքֆուր սէրայ , Թօփափափու սէրայ , Պին պիր տիրէք կոչուած հին ջրամբարը , Չուքուր չէշմէ , Զէյրէք , Մէծ շուկան , Կալաթայի աշտարակը , ևն . ևն :

25. Խակ նոր դարերու մէջ կառուցուած են Զրադանի և Տոլմա պահճէի պալատները և Հնութեանց թանգարանը , Պէշիքթաշի մեծ ժամացոյցի աշտարակը և Համբայիէ մղկիթը :

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ . — 23. Ի՞նչ զիտէի Պոլսոյ պատմական ժեներուն վրայ . — 24. Որո՞նք են նին յիշատակարաններն ու ժեները . — 25. Խակ նորերը :

[Այս հնութիւններուն լուսատիպ պատկերները իբր հետաքրքրական հաւաքել օգտակար է տղոյ համար] :



8. Դ.Ա.Ս. — ԱՄՓՈՓՈՒՄ Գ. ԱՄՄՈՒԱՆ

Պոլսոյ քաղերը . — Հարաւակողմն են Գում-Գափու , Գում-Գափուի Դուրս , Կէտիկ-Փաշա , Լանկա , Եէնի-Գափու հայրենակ թաղերը :

Արուածաններ . — Պոլսոյ դիմաց կ'ինան Ոսկեղ-

Ջիրի կողմը՝ Կալաթա , Մարմարայի և Վոսկորի միացած տեղը՝ Խւակիւար , որուն հարաւակողմն է Գատըքէոյ (Քաղկեդոն) :

Ղալաթիոյ վերեւն է Բերա որ ունի ն գլխաւոր թաղ : Գասորմ-Փաշան Ոսկեղջիւրի եղերքն է :

Ոսկեղջիւրի եղերքն են Խասդեղ , Էյուալ , Ֆէնէր , Պալաթ և այլ թաղեր :

Գազըլ Սամաթիայէն քիչ մը անողին Մարմարայի եղերքն է : Հաս է Ա. Յակոբի Որդանոցը :

Իսկ Հիւանդանոցն ու Ա. Փրկիչ եկեղեցին՝ Եէտի-Գուլէն դուրս , երկաթուղիի գիծին վրայ են :

Վասփորի նեղուցին երկու եղերքները բազմաթիւ գիւղեր կան , նշանաւոր են իրենց գեղեցիկ չէնքերով , բնական դիրքով , օդով , ջրով :

Պոլսոյ մէջ նշանաւոր են իրեւեւ հնութիւն՝ Զէմպէրի թաշ , Տիքիլի թաշ , եւայլն : Նաև Աշտարակները , Թօփ-Գալուի պալատը , Պինպիրսիրէկի հանրածանօթ ջրամբարը , եւայլն :



ԹՈՒԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ

1 ԴԱՍ . — ԳՈՒՄԱՐՈՒՄ

1. Թուի ի՞նչ ըսել է գումարել . — 1. Աւասիկ երկու պղամիկ ծրարներ , մէկուն մէջ և հատ գրիչ կայ , միւսին մէջ 8 հատ : Սա ծրարին գրիչները միւսին հետ կը միացընեմ ու կը համբեմ , 12 հատ կ'ըլլայ : Խնչպէս տեսք , գործողութիւն մ'ըրբ : Առ ըրածիս ԳՈՒՄԱՐՈՒՄ կ'ըստի , իսկ 12 թիւը զոր գտայ ԳՈՒՄԱՐ կը կոչոփ :
2. Գումարել՝ կը նշանակէ իրարու վրայ աւելցընել :

1.—1. Ի՞նչ կ'ըստի այն զորդողորիւնը զոր կ'ընեն՝ եւկու ծաւր գրիչ իրարու միացընելու ատեն , եւ ի՞նչ կ'ըստի անոր արդիւնքը : 2. Ի՞նչ ըսել է գումարել :

Վարժուքիններ . 1. — Գումարեցէք 7 գնտակ և 3 զնտակ . — 8 լուրիա և 5 լուրիա . — 6 հաւկիթ և 8 հաւկիթ . — 7 գիրք և 8 գիրք . — 9 տետրակ և 8 տետրակ : 2. — 4 թիւը միեցցոցէք 10 անգամ , 100 անգամ , 1000 անգամ :

2 ԴԱՍ . — ԳՈՒՄԱՐՈՒՄ (Շար.)

3. Տարեր տեսակ առարկաները իրարու վրայ չեն գումարուիր . — Մենք գրիչները գրիչներու վրայ գումարեցինք : Այս կերպով , մի եւ նոյն տեսակ առարկաները կրնանք իրարու վրայ գումարել , Խնչպէս՝ մատիաներ մատիաներու հետ , գրչածայրեր գրչածայրերու հետ : Բայց չենք կրնար 3 գրիչ և 4 խնձոր իրարու վրայ աւելցընել , կամ 6 մատիս և երկու գրիք իրարու վրայ գումարել , որովհետեւ ելածը ի՞նչ է , գրիչ թէ

խնձոր , մատիքա թէ գիրք , — ո՞չ մէկը ո՞չ միւսը : Բայլ է թէ առարկեր տեսակ առարկաները իրարու վրայ չեն գումարուիր :

2. Ո՞ր առարկաները կրնանք զումարել : Գրիչները խնձորներուն նետ կարելի՞ է զումարել : Մատիսները զնակներո՞ւն նետ :

Վարժուքիններ . **3.** — Իրարու վրայ աւելցուցէք 6 խնձոր և 6 խնձոր . — 3 կաղամար , 5 կաղամար և 7 կաղամար : — 500 թիւը 10 անգամ պղամիցուցէք : **4.** — Գումարեցէք 3 սիւն , 5 սիւն և 8 սիւն :

3 ԴԱՍ . — ԳՈՒՄԱՐՈՒՄ (Շար.)

3. Խնչպէս կրնանք թիւ մը ուրիշ թիւի մը վրայ աւելցնել . — Թիւ մը ուրիշ թիւի մը վրայ աւելցընելու համար , կրնանք առաջին թիւին բոլոր միւսթիւնները մէշկիկ մէկիկ՝ երկուորդ թիւին վրայ աւելցընել : Այսպէս 3ը 6ին վրայ աւելցընելու համար , կ'ըսենք . 6՝ 1ալ , կ'ընէ 7 , 7՝ 1ալ կ'ընէ 8 , 8՝ 1ալ կ'ընէ 9 : Բայլ է թէ 3 միւսթիւն , այսինքն երեք հատ 1 (1. 1. 1) աւելցուցինք 6ին վրայ , որ եղաւ 9 , գումարը : Բայց եթէ բոլոր թիւերը այս կերպով , մէկիկ մէկիկ , իրարու վրայ գումարենք , շատ երկար կ'ըլլայ :

4. Ի՞նչ պէտք է զիսնալ աղեկի զումարելու համար . — Աղեկ գումարել սորվելու համար , պէտք է բերանացի զիսնալ թէ թուանշան մը ուրիշ թուանշանի մը վրայ աւելցընելով ի՞նչ կ'ունենանք : Այս բանը կրնանք սորվել զումարելու աղիւանակով :

3. Թիւ մը ուրիշ թիւի մը վրայ ի՞նչպէս կրնանք աւելցընել : Այս կերպը զործնական եւ դիւրի՞ն է : **4.** Գումարում աղեկի ընելու համար ի՞նչ պէտք է զիսնալ :

4 ԴԱՍ. — ԳՈՒՄԱՐՄԱՆ ԱՂԻԽՍԱԿԲ

5. Գումարման աղիւսակը. — Միեւնոյն թուանշանին երկու թիւերը իրարու վրայ դումարել կը սորվինք այս աղիւսակին մէջ .

1'	2	ալ	կ'ընէ	3	1'	3	ալ	կ'ընէ	4
2'	2	—	—	4	2'	3	—	—	5
3'	2	—	—	5	3'	3	—	—	6
4'	2	—	—	6	4'	3	—	—	7
5'	2	—	—	7	5'	3	—	—	8
6'	2	—	—	8	6'	3	—	—	9
7'	2	—	—	9	7'	3	—	—	10
8'	2	—	—	10	8'	3	—	—	11
9'	2	—	—	11	9'	3	—	—	12

5. Ըսէ՛ք ի՞նչ թիւ կ'ունենա՞ 2 աւելցընելով նախնական 9-ը թիւներուն վրայ : Խոկ 3 աւելցընելո՞վ ինչ թիւեր կ'ունենա՞ :

5 ԴԱՍ. — ԳՈՒՄԱՐՄԱՆ ԱՂԻԽՍԱԿԲ (Շար.)

1'	4	ալ	կ'ընէ	5	1'	5	ալ	կ'ընէ	6
2'	4	—	—	6	2'	5	—	—	7
3'	4	—	—	7	3'	5	—	—	8
4'	4	—	—	8	4'	5	—	—	9
5'	4	—	—	9	5'	5	—	—	10
6'	4	—	—	10	6'	5	—	—	11
7'	4	—	—	11	7'	5	—	—	12
8'	4	—	—	12	8'	5	—	—	13
9'	4	—	—	13	9'	5	—	—	14

Գարձեալ՝ նախնական ինը թիւներէն ամէն մէկուն վրայ 4 աւելցնելք, ի՞նչ թիւ կ'ունենա՞ : Խոկ 5 աւելցընելո՞վ :

Վարժուքիննելք. **5.** — Մէկ արշըն չուխան կ'արժէ
20 պը. քանի՞ պը. կ'արժէ 10 արշըն չուխան , քանի՞
կ'արժէ 100 արշընը : **6.** — Սա պատուհանը 6 քառա-
կուսի ունի , սա միւսը՝ 8 քառակուսի , երկուքը մէկ-
տեղ քանի քառակուսի ունին : **7.** — Սա պղտիկ տը-
զան 8 տարեկան է , սա միւսը 9 , երկուքը մէկանդ
բնու տարիք ունին :

6 ԴԱՍ. — ԳՈՒՄԱՐՄԱՆ ԱՂԻԽՍԱԿԲ (Շար.)

1'	6	ալ	կ'ընէ	7	1'	7	ալ	կ'ընէ	8
2'	6	—	—	8	2'	7	—	—	9
3'	6	—	—	9	3'	7	—	—	10
4'	6	—	—	10	4'	7	—	—	11
5'	6	—	—	11	5'	7	—	—	12
6'	6	—	—	12	6'	7	—	—	13
7'	6	—	—	13	7'	7	—	—	14
8'	6	—	—	14	8'	7	—	—	15
9'	6	—	—	15	9'	7	—	—	16

Ի՞նչ գումար կ'ունենա՞ , երեւ են մինչեւ 9 թիւներէն իւրաման-
չիւրէն վրայ 6 աւելցընելք : Եօրք աւելցընելո՞վ ինչ թիւեր կը ուսանա՞ :

Վարժուքիննելք. **8.** — Մարդ մը երկու օր ճամբայ
քամեց , առաջին օրը 7 ժամ , երկրորդ օրը 9 ժամ .
քանի՞ ժամ քալեց երկու օրուան մէջ : **9.** — Եթէ այ-
սօր , երկուշաբթի , ամսուն 7 ն է , մինչեւ շաբաթի օր
ամսուն քանի՞ կ'ըլլայ : **10.** — Որսորդ մը բանեց 5
կաքաւ և 9 արտոյտ , քանի՞ թոշուն որսաց :

7 ԴԱՍ. — ԳՈՒՄԱՐՄԱՆ ԱՂԻԽՍԱԿ (Շար.)

1'	8	ալ	կ'ընէ	9	1'	9	ալ	կ'ընէ	10
2'	8	—	—	10	2'	9	—	—	11
3'	8	—	—	11	3'	9	—	—	12
4'	8	—	—	12	4'	9	—	—	13
5'	8	—	—	13	5'	9	—	—	14
6'	8	—	—	14	6'	9	—	—	15
7'	8	—	—	15	7'	9	—	—	16
8'	8	—	—	16	8'	9	—	—	17
9'	8	—	—	17	9'	9	—	—	18

Թիւ 1 էն միջեւ 9 ին վրայ 8 գումարելով ի՞նչ թիւ կ'ունենա՛:
Հապս 9 աւելցնելով ի՞նչ թիւեր կը կազմեֆ:

8 ԳԱՍ . — ԳՈՒՄԱՐՈՒՄ (Ծար.)

6. Երկու թիւերու կարգը փոխենք, անոնց գումարը չի փոխափիր. — Կը տեսնենք գումարման աղիւսակին մէջ որ 3՝ 4 ալ կ'ընէ 7, կամ 4՝ 3 ալ կ'ընէ 7, 5՝ 3 ալ կ'ընէ 8, կամ 3՝ 5 ալ կ'ընէ 8: Ասի կը ցուցընէ թէ երկու թիւեր իրարու վրայ գումարած ատենդ, մէկը առաջ դրեր ես միւսը ետ, նշանակութիւն չունի, գումարը միշտ միեւնոյն է:

Ուրեմն, երբ շատ մը թիւեր ունենաք գումարելու, ի՞նչ կարգով կ'ուզեք գումարեցէք, կամ՝ ո՞ր թիւէն կ'ուզեք սկսեցէք, միշտ միեւնոյն գումարը կ'ելլէ:

6. Գումարուելիք երկու թիւերու կարգը կրնա՞ն փոխել: Օրինակներ տուեք: Շատ թիւեր գումարած ատենդիդ, թիւերը որ եւ տարով կրնա՞ն իրարու վրայ աւելցրել:

Վարժութիւններ. **11.** — Հետեւեալ թիւերը գրով՝ գրեցէք, 80975, 15080, 1805, 1453900, 103206: **12.** — Թուանշանով գրեցէք. Երկու միլիոն չորս հարիւր հազար. Ութը հազար չորս. Տասնըհինգ հազար երկու հարիւր ութսուն: **13.** — Ո՞րն է այն թիւը որ կը նշանակէ 9 տասնաւոր և 8 միաւոր. — 6 հարիւրաւոր և 7 միաւոր. — 11 հազարաւոր, 7 տասնաւոր և 5 միաւոր. — 70 հազարաւոր, 3 հարիւրաւոր, 6 տասնաւոր: **14.** — Հետեւեալ թիւերուն մէջ քանի՞ հատ հազարաւոր, հարիւրաւոր, տասնաւոր և միաւոր կայ, 867, 198, 20150, 935800, 18799: **15.** — Թիւ մը կայ որ կը բաղկանայ 1 հարիւրաւորէ, երկու տասնաւորէ և 5 միաւորէ. ո՞րն է այն թիւը:

9 ԳԱՍ . — ԳՈՒՄԱՐՈՒՄ (Ծար.)

7. Գումարման սահմանը. — Շատ մը թիւեր իրարու վրայ գումարել, կը նշանակէ այն բոլոր թիւերը մէկանուն հաւաքել մէկ թիւ կազմելու համար, որ կը կոչուի Գումար: Գումարին մէջ այնքան միութիւն կայ, որքան միութիւն որ կայ այն բոլոր թիւերուն մէջ:

8. Գումարման նշանը. — Գումարման նշանը սախաչաձեւն է + որո՞ն առաւել կ'ըստի և կը դրուի երկու կամ աւելի թիւերու մէջտեղ, այսպէս 3+4 ը կը դրուի և կը կարդացուի երեխ առաւել չորս: Ասոնց գումարն է 7, ուրեմն կը գրուի 3+4=7 և կը կարդացուի երեխ առաւել չորս՝ հաւասար եօրը, ուրեմն սա = նշանին անունն է հաւասար:

9. Ի՞նչ բայ է շատ մը թիւեր գումարել: **8.** Ո՞րն է գումարման նշանը: Օրինակ մը տուեք:

10 ԳԱՍ . — ԳՈՒՄԱՐՈՒՄ (Ծար.)

9. Երարու վրայ գումարել երկու թիւեր, որոնցու մէկը միայն մէկ բաւանական ունենայ. — Մենք արդէն գումարման աղիւսակին մէջ արվելցանք և հիմա դիտենք թէ ի՞նչպէս պէտք է երկու թիւեր իրարու վրայ գումարել: Միեւնոյն կերպով կրնանք մէկ թուանշանով թիւը երկու թուանշանով թիւին վրայ գումարել, օրինակ 14+6=20, 58+3=61, նոյնպէս 625+5=630, 912+3=915: Անոնք որ գումարութիւն կրեն, կրնան մատերու վրայ համրել:

9. Ի՞նչպէս պիտի սորվիք գումարել երկու թիւեր որոնց մէկը միարուանան է:

Վարժութիւններ. — **16 էն ՅԱ.** Հետեւեալ գումարումներն ընկել , 57 + 9 : 48 + 6 : 67 + 8 : 92 + 5 : 58 + 3 : 63 + 9 : 36 + 5 : 427 + 3 : 532 + 8 : 627 + 9 : 453 + 6 : 267 + 8 : 438 + 9 : 562 + 6 : 417 + 6 : 238 + 7 : — **ՅՅ.** Ես 6 տարեկան եմ, եղբայրս 2 տարի մեծ է ինձիք, քանի տարեկան է եղբայրս: — **ՅՅ.** Տուն մը 2 գուռ և 7 պատուհան ունի , 2 գուռ և 3 պատուհան ալ շինցին , քանի գուռ , քանի պատուհան եղաւ: — **ՅԿ.** Հաւանոցին մէջ 7 հաւ և 3 բադ կայ , որեմն քանի թռչուն կայ հաւանոցը: — **ՅՃ.** Պարտիզան մը 8 հատ ինձորի և 3 տանձի տունկ տնիկեց , քանի տունկ տնիկեց :

11 ԴԱՍ . — ԳՈՒՄԱՐՈՒԽՄ (Շար.)

10. Քանի մը բուանաւներ աւելցրել ո՞ր եւ է թիվ վրայ. — Այսինքն եթէ երկու , երեք , չորս թուանշան ունենանք և ուզենք թիւի մը վրայ աւելցընել օրինակ 2 , 5 , 7 ը ուզենք աւելցընել 12 ին վրայ , պէտք է նախ 2 ը աւելցընել , յետոյ 5 ը , յետոյ 7 ը : Այսպէս , 12 + 2 = 14 : 14 + 5 = 19 : 19 + 7 = 26 : Այսինքն 12 առաւել 2 կ'ընէ 14 , 14 առաւել 5 կ'ընէ 19 և 19 առաւել 7 կ'ընէ 26 :

11. Պէտք է կարճ խօսիլ և այսպէս ըսկել , 12 2 ալ 14 , 5 ալ 19 , 7 ալ 26 :

10. Նաև մը միաբուանան թիւեր ո՞ր եւ է թիվ վրայ աւելցնելը ի՞նչպէս կ'ըլլայ : **11.** Ի՞նչ կերպ ընելու է:

12 ԴԱՍ . — ԳՈՒՄԱՐՈՒԽՄ (Շար.)

12. Շատ մը բուանաւներէ բաղկացած թիւեր իրարու վրայ գումարել (անոք առնելով) . — 1. Կ'ուզենք իրարու վրայ գումարել 314 , 451 և 213 թիւերը: Պէտք է ասնք իրարու տակ գրել այսպէս որ միաւորները

իրարու տակ գան , տամաւորները իրարու տակ և հարիւրաւորներն ալ իրարու տակ : Սապէս , 314 451 213 յետոյ գիծ մը գծել ահոնց ներքեւէն :

978

2. Այսպէս գրելէ յետոյ , կըսկախնք նախ միաւորները իրարու վրայ գումարել և կ'ըսենք , 4՝ 1 ալ 5 , 3 ալ 8 և միաւորներուն տակ կը գրենք 8 , յետոյ կը գումարենք տամաւորները , 1՝ 5 ալ 6 , 1 ալ 7 և կը գրերենք տամաւորներուն տակ 7: Յետոյ հարիւրաւորները՝ այսպէս , 3՝ 4 ալ 7 , 2 ալ 9 , և կը գրենք հարիւրաւորներուն տակ 9: Գումարը կ'ըլլայ 978 :

12. — 1. Գումարուելիք թիւերը ի՞նչպէս շարելու է : — 2. Ե՞տի ինչ ընելու է :

Վարժութիւններ. — **ՅՅ ՅՅ.** Հետեւեալ գումարումներն ընկել , 348 + 121 + 220 : — 1143 + 402 + 234 : — 203 + 15 + 371 : — 8503 + 1051 + 323 :

13 ԴԱՍ . — ԳՈՒՄԱՐՈՒԽՄ (Շար.)

13. Շատ մը բուանաւներ ունեցող թիւեր իրարու վրայ գումարել (ձեռք առնելով) . — Նախորդ գասի օրինակն մէջ աւեսանք որ մէկ սինի վրայ գտնուող թիւերուն գումարը 9 էն աւելի չէր : Բայց ամէն ատեն այդպէս չի պատահիր , երբեմն ալ այդ գումարը 9 էն աւելի կ'ըլլայ : Օրինակ . կ'ուզենք իրարու վրայ գումարել , 2947 , 1812 և 619 թիւերը :

2947 Նախ այս թիւերը իրարու տակ կը գրենք , այն 1812 պէս որ ամէն մէկ թուանշանը իր տեղը պահէ :

619 Յետոյ աջ կողմէն սկսելով՝ միաւորներու սիւնը 5378 կը գումարենք , ըսելով , 7՝ 2 ալ 9՝ 9 ալ 18 :

Հիմա չենք կրնար այս 18ը գրել գծին տակ, որովհետեւ 8ը միաւոր է, իսկ 1ը տասնաւոր, ուրեմն 8 միաւորը կը գրենք միաւորներու սիւնին տակ և 1ը ձեռք կ'առնենի ու կ'ըսենք, ձեռք կայ մեկ, 4 ալ՝ 5, 1 ալ՝ 6, 1 ալ՝ 7, այս 7ը տասնաւոր է արդէն և կը գրենք տասնաւորներու սիւնին տակ : Հիմա ձեռք չկայ, ուստի հարիւրաւորները կը գումարենք, սապէս . 9՝ 8 ալ 17, 6 ալ՝ 23, այս 23ին 3ը հարիւրաւոր է, կը գրենք հարիւրաւորներու սիւնին տակ, իսկ 2ը հազարաւոր է, ձեռք կ'առնենք . և կ'ըսենք, ձեռք կայ 2, 2 ալ՝ 4, 1 ալ 5 : Այս վերջին 5ը հազարաւոր է, կը գրենք և գործողոթիւնը կը վերջանայ: Գումարն է ուրեմն 5378:

13. Բացաւէցէ՛ ինչպէս կը գումարէ՛ շատ մը բիւե՞ ինչպէս 2947, 1812 և 619 :

Վարժութիւններ. — **40.** Քաղաքի մը մէջ երեք դըպրոց կայ, առաջինին մէջ 124 աշակերտ, երկրորդին մէջ 132 և երրորդին մէջ 108 աշակերտ կայ, երեքին մէջ քանի՞ աշակերտ կայ: — **41.** Մարդ մը Դեկտեմբերի մէջ 124 դրչ. Յունիվարի մէջ 87 դրչ. և Փետրվարի մէջ 52 դրչ. ծախք ըրաւ, հաշուեցէք թէ երեք ամսուան մէջ քանի՞ դրչ. ծախք ըրաւ: — **42.** Մարդ մը իր նրաւած տանը տարեկան վարձքը երեք անգամէն վճարեց, առաջին անգամ 95 դրչ. երկրորդ անգամ 560 դրչ. երրորդ անգամ 1110 դրչ. Ենչ է տանը ամբողջ վարձքը:

14. ԳԱՍՏ. — ԳՈՒԱԲԱՐՈՒՄ (Եար.)

14. Զեռք տունել. — Արդէն նախորդ օրինակներու մէջ սորվեցանք թէ ի՞նչ ըսել է «ձեռք առնել», այսինքն երբ վերէն վար միաւորներու կամ տասնաւորներու սիւնը կը գումարենք, եւ գումարը կ'երկու թիւ ելլէ, աջ

կողմինը կը դրենք, ձախը ձեռք կ'առնենք : Ասոր կանոնը շատ պարզ է.

Կթէ սիւնակին գումարը 10էն մինչև 19ը լլայ, ձեռք կայ 1 — — — 20էն — 29 — — — 2 — — — 30էն — 39 — — — 3

և այսպէս շարունակ, միշտ այդ գումարին ձախ կողմի թիւը ձեռք կ'առնենի:

14. Խօնչ ընելու և երբ սիւնակի մը բիւերուն գումարը 9էն մեծ է:

Վարժութիւններ. — **43 Էն 50.** Հետեւեալ գումարումներն ընել, 1328 + 457 + 365 + 7452 + 305:

207 + 4518 + 37 + 480 :
2007 + 98 + 234 + 567 + 18 :
4539 + 2078 + 472 :
2237 + 4750 + 3020 + 548 + 712 :
438 + 8727 + 45617 + 709 :
279 + 3785 + 57296 + 4783 + 257 :
9 + 17 + 435 + 7229 + 80452 + 7980 + 375 + 30 + 8 :

51. Երկրագործ մը սերմի համար 314 դրչ. ի ցուլին, 210 դրչ. ի գալի և 106 դրչ. ի կորեկ գնեց, քառակի՞ դրչ. տուաւ : — **52.** Երկու քոյրեր մէկ շարթուան մէջ կար կարելով վաստկեցան, մէկը 30 դրչ. միւսը 18, երկուքը մէկակ քանի՞ դրչ. վաստկեցան : —

53. Դպրոցի մը Ա. դասարանին մէջ 26 աշակերտ կայ, Բ. ին մէջ 18, Գ. ին մէջ 32, Դ. ին մէջ 16, քանի՞ աշակերտ կայ դպրոցին մէջ : — **54.** Լեւոն խաղի մէջ վաստկեցաւ 14 դնտակ, արդէն 15 ալ ունէր, հիմա քանի՞ գնտակ եղաւ: — **55.** Մարդ մը իրեկունը տուն դարձած տանին գնեց 8 դրչ. ի միս, 3 դրչ. ի բրինձ, 2 դրչ. ի պտուղ, 14 դրչ. ի իւղ, քանի՞ դրչ. ի բան գնեց: — **56.** Պատիկ աղջիկ մը իր գրավարժութեան տեսրակին 12 երեսը գրած է, դեռ 12 ալ կը մնայ գրելու, տեսրակը քանի՞ երես ունի : — **57.** Դարբին մը Յունվար ամսուան մէջ շահեցաւ 290 դրչ. Փետրվարի մէջ

465 և Մարտին մէջ 1184 դր. երեք ամսուան մէջ քառակի դր. շահնեցաւ : — Տ8. Գինեգործ մը երեք կարաս գինի ծախսեց , ասացին կարասին մէջ 128 օլսա կար , երկրորդին մէջ 194 , երրորդին մէջ 215 , ընդամէնը քանի՞ օլսա գինի ծախսեց : — Տ9. Երկրագործ մը ունի 3 կով , 25 ոչխար , 8 այծ , 6 եղ և 2 գոմէշ , քանի՞ տաւար ունի այս երկրագործոր : — Տ10. Պարտիզպան մը ծախսեց 5 դր. ի մագտանոս , 3 դր. ի սպալաթա , 6 դր. ի կաղամբ , քանի՞ դր. ի բան ծախսեց : — Տ11. Յակոր 8 բարենիշ շահած է չորեքշաբթի և 7 բարենիշ ուրբաթ , քանի՞ բարենիշ շահնեցաւ մէկ շաբթուան մէջ : — Տ12. Տղայ մը իր մօրը համար 60 փարայի թել և 20 փարայի կոճակ գնեց , քանի՞ դր. պիտի վճարէ :

15 Գ.Ս. — ԳՈԽՄԱՐՈՒՄ (Շար.)

15. Զեռք առնելով գումարել . — Կ'ուզենք գումարել սա երեք թիւերը 734 + 247 + 856 : Նախ իրարուտակ կը գրենք յետոյ կանոնին համեմատ կ'ը- 734 սենք , 4 7 ալ 11 , 6 ալ 17 , կը գրենք 7 , 247 ձեռք կ'առնենք 1 , ու կ'ըսենք՝ ձեռք կայ 1 , 856 3 ալ 4 , 4 ալ 8 , 5 ալ 13 կը գրենք , ձեռք — կայ 1 , 7 ալ 8 , 2 ալ 10 , 8 ալ 18 կը գրենք 1837 18 , որովհետեւ ալ թիւ չկայ որ 1 ը ձեռք ընենք անոր վրայ աւելցնելու համար :

15. Զեռք կայի դրուքեամբ գումարեցէ 734 , 247 և 856 թիւերը :

Վարժութիւններ . — Տ13 էն Տ10. Հետեւեալ գումարումներն ընել , 23 + 8 + 7 : 72 + 6 + 5 + 7 : 17 + 5 + 4 + 3 + 8 : 66 + 2 + 7 + 9 : 327 + 5 + 6 : 247 + 8 + 6 + 2 : 738 + 7 + 5 + 2 : 830 + 7 + 3 + 6 + 4 : — Տ11. Գիւղացի կին մը 2 դր. ունէր քովը քաղաք եկած ժամանակ , հոն ծախսեց 8 դր. ի հաւկիթ և 18 դր. ի կարագ իւղ , հիմա քանի՞ դր. ունեցաւ :

մը մէջ երկու սալորենի կայ , մէկուն վրայ 52 սալոր գտնուեցաւ , միւսին վրայ 18 սալոր , երկուքին վրայ քանի՞ հատ կայ : — Տ13. Մեր պարտէցին մէջ երեք նեղ ծամրայ կայ , չափեցինք , մէկը 28 սոք եկաւ , միւսը 44 և երրորդը 56 , երեքը մէկուեղ քանի՞ սոք երկայնութիւն ունին : — Տ14. Սակերտափ մը ամսական միջին թիւերն են՝ վարքինը 8 , դասիերունը 7 , աշխատասիրութեանը 7 , ինչ է այդ աշակերտի միջին թիւերուն գումարը : — Տ15. Հայրը պատուիրեց որ Սարդերուն գումարը : — Տ16. Հայրը պատուիրեց որ Սարդերուն գուման իշնէ բաներ մը գնելու , Սարդիս գնեց 3 զիս շուկան իշնէ բաներ մը գնելու , Սարդիս գնեց 3 դր. ի գեանալիննոր , 8 դր. ի շաքար , 6 դր. ի խանուէ , 2 դր. ի թէյ , քանի՞ դր. ի բան գնեց Սարդիս : — Տ17. Սա Պօղոսը 12 ապրեկան է հիմա , 6 ապրի յետոյ , երդ գպրոցը աւարտէ , քանի՞ ապրեկան կ'ըլլայ : — Տ18. Մարդ մը ձի մը գնեց 1220 դր. ըսել թէ քանի՞ դր. ծախսեց : — Տ19. Բնուանիք մը տարին 3850 դր. ծախսեց կ'ընէ ուտելիքի , 1260 դր. հագնելիքի , 850 դր. այլ և այլ ծախսքի և 1100 դր. ալ կը իսնայէ , այս տան ամբողջ եկամոււար քանի՞ դր. է : — Տ20. Մարդ մը 15000 դր. տուաւ տուն մը գնեց , հիմա կ'ուզէ ծախսել այն պէս որ 2500 դր. վաստիփ , ով որ այս տունը գնէ , քանի՞ դր. պէտք է վճարէ : — Տ21. Թիւի ծառի մը վրայ կը գտնուի 5 զիսաւոր ձիւղ , 38 հատ երկրորդական ձիւղ և 244 հատ աւելի մանր ձիւղ , իրարու վրայ քանի՞ ձիւղ կը գտնուի թիւնիփն վրայ : — Տ22. Ենայող մարդ մը մէկ տարուան մէջ երեք անդամ խորհնայող մարդ մը մէկ տարուան մէջ երեք անդամ իսրայէլին դրամ յանձնեց , առաջին անդամ 280 դր. երկրորդ անդամ 670 դր. և վերջին դամ 1155 դր. քանի՞ դր. աւելցուց մէկ տարուան մէջ : — Տ23. Երեք զիւղեր իրարու մօտ կը գտնուին , առաջինին մէջ կայ 360 բնակիչ , երկրորդին մէջ 745 , չորրորդին մէջ 1290 , երեք զիւղերուն մէջ քանի՞ հոչուրողին կայ : — Տ24. Մարդ մը իր տանը անենակները վարդի կայ : — Տ25. Մարդ մը իր տանը անենակները վարձուած է , Ա. սենեակէն տարին 1460 դր. կ'առնէ , Բ. էն 1680 , Գ. էն 2510 , Դ. էն 2700 , ընդամէնը քանի՞ դր. կ'առնէ տարին : — Տ26. Գրավաճառ մը երեք օրի-

նակ գիրք տպել տուաւ, Ա. օրինակէն 2000 հատ, Բ. էն 2800, Գ. էն 3000, քանի օրինակ տպել տուաւ ընդամէնը :

16 Գ.Ա. — ԳՈՒՄԱՐՈՒՄ (Շար.)

16. Փորձ. — Կրնայ ըլլալ որ թիւերուն դումարը սխալ հանենք, ասոր համար աւելի աղէկ է որ սուզելիք թէ մեր ըրած դումարումը սխալ է թէ ուզիղ : Երբ դումարումը ըրած լինցած ենք, ու անդամ մ'ալ կը դումարենք սոսուգելու համար, ասոր կ'ըստի փորձ :

16. Եթի գործողուրիւնը լինեայ, ի՞նչ լինելու է: Ի՞նչ է գործողուրիւն մը փորձը :

Վարժութիւններ. — **85.** 1 էն սկսելով 6 առ 6 հաշիւրրէք, մինչև համարք այնպիսի թիւի մը որ 60 էն մեծ ըլլայ, օրինակ. 1' 6 ալ 7, 6 ալ' 13, 6 ալ' 19 ելն : — **86.** Նորէն համրեցէք 6 առ 6 մինչև որ համարք 60 էն աւելի մեծ թիւի մը, համրելով 2 էն այսպէս. 2' 6 ալ 8, 6 ալ' 14, 6 ալ' 20 ելն : — **87.** Համրեցէք 5 առ 5 մինչև 100, սկսելով 5 էն, օրինակ. 5' 5 ալ 10, 5 ալ' 15, 5 ալ' 20 ելն : — **88.** Համրեցէք 5 առ 5 մինչև 100, սկսելով 1 էն, օրինակ. 1' 5 ալ 6, 5 ալ 11, 5 ալ' 16 ելն : — **89.** Համրեցէք 7 ովլ մինչև 70, սկսելով 1 էն, օրինակ. 1' 7 ալ 8, 7 ալ' 15, 7 ալ' 22 ելն. — **90.** Համրեցէք 7 ովլ մինչև 100, սկսելով 2 էն, օրինակ. 2' 7 ալ 9, 7 ալ' 16 ելն : — **91.** Տուն մը կ'արժէ 4600 դր. տան տէրը նորոգութիւններ ըրաւ, 250 դր. որմնագիրի տուաւ, 390 դր. ատաղձագործի, 85 դր. կտղարարի, հիմա քանի դր. կ'արժէ այս տունը:

17 Գ.Ա. — ԳՈՒՄԱՐՈՒՄ (Շար.)

17. Գումարումի փորձը. — Գումարումի փորձը շատ պարզ է: Առաջ մենք վերէն վար դումարեցինք, հիմա

վարէն վեր կը դումարենք, պէտք է որ միեւնոյն դումարը ելլէ, այսպէս .

Գումարում	Օրինակ	Փորձ
3' 2 ալ 5, 1 ալ 6)	243	1' 2 ալ 3, 3 ալ 6)
4' 1 ալ 5, 3 ալ 8)	512	3' 1 ալ 4, 4 ալ 8)
2' 5 ալ 7, 6 ալ 13)	631	6' 5 ալ 11, 2 ալ 13)
1386		

17. Գումարման փորձը ի՞նչպէս կ'ըլլայ :

Վարժութիւններ. — **92** էն **94.** Հետեւեալ դումարումներն ընել, փորձերով մէկսեզ : 1728 + 436 + 17 + 228 + 74 + 748: 237 + 45890 + 307 + 4927 + 30578: 4785 + 3789 + 4639 + 74 + 438 + 6720 + 3007: — **95.**

1 էն սկսեալ մինչէ 9, կարգով իրարու վրայ դումարել, այսպէս. 1' 2 ալ 3, 3 ալ' 6, 4 ալ 10 ելն : —

96. Յետոյ ասոր փորձը ըրէք, սապէս. 9' 8 ալ 17, 7 ալ 24, 6 ալ 30 ելն: — **97.** 57 էն մինչէ 62 եղած թիւերը իրարու տակ դումարեցէք : — **98.** Անոր փորձն ալ ըրէք : — **99.** 1 էն սկսելով մինչէ 19 դումարեցէք, յետոյ անոր փորձը ըրէք 19 էն սկսեալ մինչէ 1 :

18 Գ.Ա. — ՄՏԱԿՈՐ ԳՈՒՄԱՐՈՒՄ

18. ՄՏԱԿՈՐ ԳՈՒՄԱՐՈՒՄ. — Պէտք է վարժուիլ թիւերը մէտով դումարելու, այսինքն առանց դրելու :

1. Օրինակի համար, պէտք է 50 ին և 80 ին դումարը գտնել մտքով ($50 + 80$): Մտքով կը հաշուենք որ 50ը կ'արժէ 5 հատ 10, իսկ 80ը 8 հատ 10, ըսել է թէ երկուքը կ'արժեն 5 + 8ը 10 կամ ($5 + 8 = 13$) 13 հատ 10, այսինքն 130: Ուրիշն մտքով կը համրենք 5 հատ 10, 8 հատ 10 ալ կ'ընէ 13 հատ 10, կամ 130: Ուրիշ օրինակ 300 և 700ը քանի կ'ընեն, մէկին մէջ 3 հատ

100 կայ, միւսին մէջ 7 հատ 100, ըսել է երկուքին մէջ 10 հատ 100, որ կ'ընէ 1000 :

2. Ենթադրենք թէ պէտք է $50 + 84$ ի գումարը զանել, 50 ի մէջ զիտենք որ 5 հատ 10 կայ, 80 ին մէջ 8 հատ 10 և 4 միւթիւն, ուրեմն 50 և 80 կ'ընեն 130 , 4 պէլ 134 :

18. — 1. Մաւոր կերպով զումար ընելի ի՞նչպէս կ'ըլլայ: Օրինակ 50 և 80 բիւերը կրեա՞ն մէնով զումարել: — 2. Խակ 50 և 84 բիւերը:

Վարժութիւններ. — 100. Հետեւեալ գումարումները մտքով ըրէք, $74 + 12$: $84 + 18$: $48 + 62$: $54 + 25$ + 30 : $48 + 42 + 18$: $37 + 48$: $460 + 22 + 12$:

19 Գ.Ս.Ս. — ՄՏՍԱՒՐՈՐ ԳՈՒՄԱՐՈՒՄ (Շար.)

3. Վերջապէս ենթադրենք թէ $58 + 84$ ի գումարը պիտի գանենք, նախ կը տեսնենք որ 58 հաւասար է $50 + 8$ ի, իսկ 84 ը հաւասար է $80 + 4$ ի, ըսել է թէ պէտք է իրարու վրայ գումարել $50 + 8 + 80 + 4$, կամ աւելի զիւրին $50 + 80$ որ կ'ընէ 13 և $8 + 4$ որ կ'ընէ 12 , յետոյ $130 + 12$ որ կ'ընէ 142 :

3. Մտնով զումարեցէք $58 + 84$:

Վարժութիւններ. — 101. Բնասնիք մը կը ծախսէ ամիսը 120 դր. տան վարձքի, 450 դր. ուտելիքի, 78 դր. այլ և այլ, ի՞նչ է այս տան մէկ ամսուան ծախսքը: — 102. Մարդ մը ձեռք մը զգեստ շնելու համար 150 դր. տուաւ կերպասին, 75 դր. աստառ, կոճակ և մանր մունք ծախք, 120 դր. կարողէք, քանի՞ դր. ի եկաւ զգեստը: — 103. Հարուստ քաղաքացի մը, իր կալուածը չափեց և գտաւ որ 280 տէօքացի մը վարուցանքի հող ունի, 72 տէօնիւմ մարգագե-

ախն և 350 տէօնիւմ անսուառ, քանի՞ տէօնիւմ է այս մարդուն կալուածը: — 104. Տղայ մը ծնած է 1888 ին, որ թուականին 20 տարեկան կ'ըլլայ: — 105. Տղայ մը մէկ տարուան մէջ 5 անդամ ինսայից իր ծնողքն առած դրամը, ամէն մէկ անդամ Յ ական դր. իրարուքով շարելով գտէք թէ քանի՞ դր. ինսայից:

—^{Հ. Վ. Հ.}

20 Գ.Ս.Ս. — ԱՄՓՈՓՈՒՄ ԵՐՐՈՐԴ ԱՄԵՐԻԿԱՆ (1 էն 18)

Գաւառում (1 էն 13). — Շատ մը թիւեր իրարու վրայ զումարել, կը նշանակէ զանոնք իրարու վըրայ աւելցնել մէկ թիւ կազմելու համար: Այս թիւին կ'ըստի զումար: Գումարը կը պարունակէ այնքան միտթիւն, որքան կը պարունակէին այն բոլոր թիւերը որ իրարու վրայ գումարեցինք:

Զեռք առնել (14 էն 15). — Երբ մէկ սիւնակի թիւերուն գումարը 9 էն աւելի կուգայ, մէկ թիւը կը դրենք և միւս թիւը ձեռք առնելով կ'աւելցնենք յաջորդ սիւնակին վրայ: Այսպէս միշտ ձախ կողմի թիւը ձեռք կ'առնելով:

Փորձ (16 էն 18). — Փորձ ընել կը նշանակէ գործողութիւնը անդամ մ'ալ կատարել, որ համոզուինք թէ ուղի՞ղ է այն թէ սիսալ:

Գումարման վորձն ընելու համար պէտք է վարէն վեր գումարել (այսինքն հակառակ կողմէն):

Վարժութիւններ. — 106. 1 էն մինչեւ 94 համրեցէք 8 առ. 8: — 107. Գումարեցէք, $64,876 + 5,347 + 896 + 57,849$: — 108. Գումարել, $758,347 + 698,524 + 59,835 + 764,089$:

109. Երեք տակառը մէկտեղ քանի՞ օխա գինի կ'առնեն, եթէ առաջինը առնէ 280 , երկրորդը 295 և երրորդը 314 օխա: — 110. Երկաթագործ մը 580 դր.

խանութի վարձք կուտայ , 1850 դր . աշկերաներու վարձք և 840 դր . ածուխի և տարին 5700 դր . ալ կը վասակի , ուրեմն բոլորը քանի՞ դր . կ'ընդունի ամբողջ տարին :

111. Քաղաք մը իր շրջակաները ունի 5 գիւղ , քաղաքին մէջ կայ 35,800 բնակիչ , Ա. գիւղին մէջ 2560, Բ. ին մէջ 1210, Գ. ին մէջ 870, Դ. ին մէջ 975 և Ե. ին մէջ 312 բնակիչ , բնակամէնը քանի՞ բնակիչ ունի քաղաքը իր շրջականերովը :

112. Վաճառական մը հնանկացաւ , առնելիքի տէրկերը հաշուեցին ու տեսան որ 5 հոգիի պարաք ունի , Ա. ին 12,500 դր . Բ. ին 24,690 դր . Գ. ին 37,900 դր . Դ. ին 40,680 դր . և Ե. ին 975 դր . ընդամէնը ի՞նչ է այս վաճառականին պարաքը :

113. Միւնոյն ճամբուն վրայ 4 քաղաքներ կը գտնուին , Ա.ը Բ. էն հեռու է 5860 մէթր , Բ.ը Գ. էն 12,750 մէթր և Դ.ը Գ. էն 22,800 մէթր , ի՞նչ է Ա. քաղաքի հեռաւորութիւնը Գ. քաղաքէն :

114. Եւրոպայի բնակիչներու թիւն է 302,972,700, Ասիոյ 798,220,000 , Աֆրիկէնը 203,301,000 , Ամերիկայինը 84,374,672 , Ովլիսանիայինը 4,438,000 , հիմա գտէք ի՞նչ է ամբողջ երկրի բնակիչներուն թիւը :

115. Մեծ քաղաքի մը մէջ 38,740 տուն կայ , եթէ ենթադրենք որ ամէն մէկ տանը մէջ 8 հոգի կը գտնուի , ընդամէնը քանի՞ հոգի կայ այն քաղաքին մէջ : (8 անդամ իրարու տակ զրելով , գումարեցէք) :

ՆԱԽՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Դ.Ս.Ս. — ՀԱՍՏԱՏՈՒՆ , ՀԵՂՈՒԿ ԵՒ ԿՈԶՈՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

1. Հաստատուն մարմիններ . — Աւասիկ փայտի կը տոր մը , գրամ մը , խիճ մը , կտոր մը կտուի (Պատկ. 8): Այս մարմիններէն ամէն մէկլը ձեւ մը ունի . փայտի կտորը երկարածեւ կլոր է . գրամը կլորածեւ տափակ . խիճը կանոնաւոր ձեւ մը չունի . կտուիը կանոնաւոր ձեւ մը ունի . Այս մարմիններուն մը պատկանուի : Ասոնք հաստատուն (կամ պինդ , կարծր) մարմիններ են :

2. Հեղուկ մարմիններ . — Աւասիկ գաւաթ մը ջուր , աւասիկ շիշ մը ձէթ կտմ բաժակ մը զինի (Պատկ. 9): Ջուրը որ կը գտնուի գաւաթին մէջ , գաւաթին ձեւը ունի . եթէ այս ջուրը ուս կոնքին մէջ լեցնենք , կոնքին ձեւը կ'առնէ : Այս պէս զինիին և ձէթին համար ալ : Ասոնք հեղուկ մարմիններ են :

3. Կազախն մարմիններ . — Օդը չենք տեսներ , բայց երբ հով կայ , կը տեսնենք որ ծառերուն տերեւները կը շարժին , երբ ներար տաք՝ դուրս ցուրտ է , ձեռքերինս դնենք դրան մը կամ պատուհանի ձեղքին վրայ , օդի հոսանք մը կը դգանք : Օդը ձեւ չունի և կը տարածուի ամէն տեղ , ու կը շրջապատէ ամէն մարմին , ամէն ծակ ու ծուկ կը մտնէ : Օդը կազախն մարմին է :

1. Պինդ մարմիններ բաէք . — **2.** Հեղուկ մարմիններ բաէք . — **3.** Կազախն մարմիններ բաէք :




Պատկ. 8 — Հեղուկ կտոր մը , 2 դրամ , 3 խիճ , 4 կտուի :

Պատկ. 9 — Հեղուկ մարմիններ .

2. ԳԱՅ. — ԿԱՊԱՐԱՏԱԿԱՐԸ


4. Մարմինները որքափ առելի բարձր տեղի վար իյնան, այնան առելի արագ կ'իյնան . — Առնենք երկու զրուշնոց մը . գիտէք որ, եթէ ձեռքէ թողունք առ երկու քուշոցը, վար կ'իյնայ: Առնենք կտոր մը թողթ եւ երկու ձեռքով բռնենք, յետոյ սա երկու քուշոցը քիչ մը բարձրէն (Պատկ. 10)

թողունք: Երբ կ'իյնայ թղթին վրայ, պղտիկ ձայն մը կը հանէ ու հոն կը մնայ: Նորէն երկու քուշոցը առնենք և աւելի բարձրէն (Պատկ. 11) վար թո-



Պատկ. 10

Դունք. թղթին վրայ ինկած ատեն, ուժգին ձայն մը կը հանէ և զայն ծակելով մէջ աւելէն կ'անցնի :



Պատկ. 11

Սյասէս ուրեմն, մարմինները որչափ բարձրէն իյնան, այնան առելի արագ վար կ'իյնան :

5. Կապարանոր ջուանը . — Հիմա սա թելին ծայրը (Պատկ. 12) կապենք կտոր մը կապար կամ պարզապէս սա պղտի քարը: Ա. Բ. թելի այնպիսի ուղղութիւն մը ունի, զոր Բ. կապարը կամ քարի կտորը պղտի ունենար, վերէն վար ինկած ժամանակ: Երբ չուանի մը ծայրէն կտոր մը կապար կախենք, ասոր կ'ըսուի կապարալար:

Կապարալարին ուղղութիւնը կը կրչուի ուղղանից ու կ'ըսուի. «Այս չուանը ուղղաձիգ է»:

Որմագիրները կը գործածէն կապարալար, պատերուն երկայնքէն կը կափեն զայն, դիտելու համար թէ պատը ուղղաձիգ է:


4. Ի՞նչ կ'ըլլայ երբ մարմինները բարձր տեղի իյնան, — **5.** Ի՞նչ է կապարալիքը :

3. ԳԱՅ. — ԿՇԵՌ-ՔԸ

6. Մարմինները կշիռ ունինք . — Առնենք կտոր մը փայտ ու կտոր մը երկաթ, որ զրեթէ միենոյն մեծութիւնը ունենան: Եթէ այս երկու քը մեր երկու ձեռքերուն մէջ առնենք, յայտնի կը զգանք որ երկաթը աւելի կը կշռէ քան փայտը, այսինքն մէկ ձեռքը աւելի ուժով կը գիմագրէ որ երկաթի կտորը վար չենայ, քան միւս ձեռքը փայտին համար: Ասոր համար կ'ըսենք թէ երկաթի աւելի ծանր կը կշռէ քան փայտը :

7. Կշիռով ինչպէս կը կրունք . — Իրաւ է որ մենք ձեռքով կրնանք հասկընալ որ երկաթի կտորը աւելի ծանր է քան փայտի կտորը, բայց չենք կրնար ըսել թէ քանի անգամ մէկը միւսէն ծանր է:

Մարմիններու ծանրութիւնը չափեւ լու համար գործիք մը կայ որ կը կոչուի կշիռը ձող մ'է, (Պատկ. 2, 2') որ հաստատուած է յենարանի մը վրայ (Յ.): Ճողին ծայրէն ալ կախուած են երկու նմաններ (Ն, Ն'), որոնց մէջ պէտք է դնել այն առարկան զոր պղտի կշռենք:



Պատկ. 13


Հիմա, երկաթի կտորը դնենք մէկ նժարին մէջ, անոր մեծութեամբ փայտի կտոր մ'ալ միւս նժարին մէջ, հաւասար չի դար: Փայտի կտոր մ'ալ դնենք, հատ մ'ալ . . . մինչև ինը հատ: Հաել է թէ ինը կտոր փայտ պէտք է, հաւասար մեծութեամբ

6. Ի՞նչպէս կրնան հասկալ թէ պյուխ մարմինը ուրիշ մարմինէ մը առելի ծանր է. 7. — Ի՞նչ է կշիռը. — Կշիռով ինչպէս կը կրունք . — Երկարի կտոր մը իր մեծութեամբ փայտի կտորէ մը հանի անգամ առելի կը կուէ:

երկաթին ծանրութիւնը ունենալու համար։ Երբ երկու կողմը հաւասար գան, ողաքը մէջտեղի 0ին վրայ կուդայ։ Ուրեմն կտոր մը երկաթը, հաւասար կտոր մը փայտէն ինը անդամ աւելի կը կշռէ։

4. ԳԱՅ. — ԶՈՒԹԻՆ ՄԱԿԱԽԱՍՍՐՈՒԹԻՒՆԸ.

8. Զուրին մակախասարութիւնը. — Ամէնքդ ալ զիւտէք սա խոչոր կազի թիթեղները, որսոց վարի կողմէն շատ անդամ ծորակ մը կը բանան և կը գործածեն տուներու մէջ։ Եթէ ուղենք շատ կարեւոր բան մը կը սորվինք այս թիթեղին վրայ։ Վարի կողմէն ծակ մը բանանք և ուղիղ անկիւնի ձեւով բարակ խողովակ մը անցընենք այդ ծակին մէջ։ յետոյ ջուր լեցընենք թիթեղին մէջ մինչեւ կէսը և կաւիճով նշանակենք ջուրին բարձրութիւնը։ միւս կողմէն խողովակին մէջ դիտելով՝ պիտի տեսնենք որ հսնալ ջուրը միենայն բարձրութեանը հասած է։ այստեղ ալ կաւիճով նշան դնենք։




Պատկ. 14

Եթէ թիթեղին մէջ նորէն ջուր լեցընենք և ջուրին բարձրացած տեղը նշանակենք, կը տեսնենք որ խողովակին մէջ ալ ջուրը միենայն բարձրութեանը հասած է։ Ասի կը նշանակէ թէ ջուրը միջը միեւնոյն մակախասարութեան վրայ կը մնայ, երբ լեցուի ամանի մը մէջ և անկէ անցնի ուրիշ ամաններու կամ խողովակին բուռու մէջ։ Զուրի մակախասարութիւն ըսելով կը հասկցուի թէ անոր երեսը միենայն բարձրութեան վրայ կը գտնուի, երբ մէկ ամանէն ջուրը հոսի միւս ամանին մէջ։

8. Կազի թիթեղին մէջ լեցուած ջուրը թիթեղին կցուած խողովակին մինչեւ ո՞ր տեղը կը բարձրանայ։ — Ի՞նչ լսել է մակախասարութիւն։

5. ԳԱՅ. — ԶՈՒԹԻՆ ՄԷՋ ԸՆԿՂՄՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

9. Զուրի իր մէջ ընկղմած մարմինները կը մնչէ։ 1. Լեցընենք տաշտ մը ջուր և ձեռքերնիս կամաց մը անոր մէջը ընկղմնաք (Պատկ. 15). յայտնի կը տեսնենք որ ձեռքերնիս վար իջած ժամանակ դիմադրութիւնը կը կրէ. այու ջուրն է որ դէմ կը դնէ, և ձեռքերնիս կարծես կը թեթեւնայ ջուրին մէջ։ Երաւ ալ այսպէս է, եթէ դուք ծովու կամ գետի ջրին մէջ նետուած էք, հարկաւ դիտած էք որ ձեր մարմինը կը թեթեւնայ և եթէ քիչ մը լույալ դիտէք, ձեռքի ու ոտքի սղտիկ կանոնաւոր չարժումներ կը բաւեն ձեզ ջրին երեսը բռնելու։ Ասոր պատճառը ջրին դիմադրութիւնն է. և երբ մարմին մը շատ ծանր չէ, ջուրը անոր դէմ դնելով՝ չի թողուր որ յատակը իջնէ. այսպէս է որ նաւերը ջուրին երեսը կը մնան։



Պատկ. 15

2. Զրին այս դիմադրութիւնը աւելի աղէկ կը զգաք եթէ դատարկ ու բարակ տուփ մը ուղէք իջեցընել տաշտին մէջ։ կը տեսնէք որ տուփը ասդին անդին կը փախչի, ձեր մատերան տակէն, որովհետեւ ջուրը դէմ կը դնէ և վարէն վեր ճնշելով՝ չի թողուր որ տուփը վար իջնէ, և տուփը ջրին յատակը իջեցընելու համար, պէտք է շատ ուժով վրան ճնշել։

3. Եթէ այս տուփին մէջ քանի մը կտոր քար դնէք, ան կամաց կամաց ջրին մէջ կ'իջնէ մինչեւ կէսը և կը լույաց անոր երեսը, բայց եթէ քարերը շատ ըլլան, Նոր Դպրոց, Գ. Պրակ

առւ-փը ջրին յատակը կ'երթայ, ճիշդ ինչպէս որ նաև մը քիչ ասլրանք ունեցած ատեն, ջրին երեաը կը մնայ և կը նաւէ . իսկ երբ ասլրանքը խիստ շատ բեռցուի, կը ծանրանայ և ջրին յատակը կ'ընկղմի :

9. — 1. Զուրը կրնա՞յ ննեել՝ իր մէջ ընկդմուած մարմիններուն վրայ : — 2. Տուփ մը կամ պարապ դոյլ մը դիւրուքամբ կրնա՞նք մՏցրնել ջրին մէջ : — Ենչո՞ւ դիմադրուքիւն կը զգանի . — 3. Դոյլին տակը տար դնելով ի՞նչ կ'ըլլայ : — Ի՞նչ կը պատահի երբ տաք դրուի :

6. ԳԱՍ. — Օ Կ. Ա. Ա. Բ. Ի. Կ



Պատկ. 16. — Օդապարիկ

10. Օդապարիկ. — 1. Ա-ռէք տաշտ մը ջուր և ձեր ձեռքով ֆայտի կտոր մը ի-ջեցուցէք անոր յատակը : Ձեռքերնիդ քաշելնոււգ պէս ֆայտի կտորը կը տառքէ ջր-րին երեաը կ'ելլէ : Փայտի կտորը ջրին թեթեւ է և ա-նոր երեաը կը բարձրանայ : Միենոյն բանն է օդին հա-մար . օդէն թեթեւ մարմին մը չի կրնար հողին վրայ նստիլ, վեր պիտի բարձրա-նայ օդին մէջ :

Սյսպէս է Օդապարիկը, որուն մէջ յուսաւորութեան կազ կը լեցընեն . որովհետե-այս կազը օդէն թեթեւ է, օդապարիկն ալ գետնի վրայ չի կրնար մնալ, վեր կը բար-ձրանայ :

2. Օդապարիկը կերպասէ յինուած է և հաւկթի ձեւ ունի. կերպասը ամէն կողմէ զօրաւոր չուաններով շըր-ջապատուած է . այս բոլոր չուաններուն ծայրերը կը միանան մէկ տեղ մը , այդ տեղէն կախուած է նաւակ մը, որուն մէջ կրնան քանի մը հոգի նստիլ (Պատկ. 16):


Օդանաւորդը իր հնար, նաւակին մէջ, կը տանի շատ մը պարկեր՝ աւազով լեցուն : Երբ ուզէ շուտ շուտ վեր բարձրանալ, այդ պարկերու աւազէն (Ա.) մաս մը կը թափէ որ օդապարիկը թեթեւնայ . երբ օդապարիկը սկսի վար իջնել ինքնիբեն, նորէն մաս մը աւազ կը թափէ որ թեթեւնայ և վար իջնէ :

Խոկ երբ օդանաւորդը ուզէ շուտ շուտ վար իջնել, չուանը (Զ.) կը քաշէ . այն ատեն օդապարիկին վերի կողմէն կախարիչ մը կը բացուի և քիչ մը կազ դուրս կ'ելլէ : Այն ատեն օդապարիկը քիչ թեթեւ կ'ըլլայ եւ կը սկսի շուտ շուտ վար իջնել :

11. — 1. Ի՞նչ կը պատահի երէ փայտի կտոր մը մերէ տաւ մը չուրի մէջ եւ տու մը բողոք . — Ի՞նչ է օդապարիկը . — 2. Ի՞նչպէս կը շինուի օդապարիկը . — Օդապարիկը տու վեր բարձրացընելը ի՞նչ կերպով կ'ըլլայ . — Ի՞նչպէս վար իշեցընելու . է :

7. ԳԱՍ. — ԾԱՆՐԱԶԱՓ

12. Օդին մնչումը. — Օդը երկրի վրայ գանուած բոլոր մարմիններուն վրայ կը ճշն-շէ : Օդին մնչումը սապէս կրնայ յուցուիլ : Զրով լեփ լեցուն գաւաթ մը առէք և բերնին վրայ թուղթ մը փակ-ցընելով՝ դարձուցէք հակա-ռակ կողմը (պատկ. 17) : Պի-ցուցընող վորդ :



Պատկ. 17. Օդին մնչումը

ամ տեսնէք որ ջուրը չի թափիր : Պատճառը սա է որ օդը դուրսէն կը ճնշէ թղթին վրայ և չի թողուր որ անի բաժնուի դաւաթէն :

12. Ծանրաչափը . — Վերի օրինակով տեսանք որ օդը կը ճնշէ . ուրինն պէտք է գործիք մ'ալ գրտշնուի որ այս ճնշումը չափէ : Աւասիկ այս գործիքն է ծանրաչափը, այսինքն օդին ծանրութիւնը կամ ճնշումը


չափող : Ինչպէս կը տեսնէք պատկերին մէջ (պատկ. 18), կլորիկ տուփ մը կայ որուն բոլորափքը ժամացոյցի նման աստիճաններ նշանակուած են, այդ աստիճաններու բոլորափքն ալ քանի մը բառեր, փոփոխական, աղեկ օդ, անձեւ, մրրիկ, չոր օդ : Ալաք մ'ալ աստիճաններուն վրայ կը գառնայ :

Գործիքը այնպէս մը շնուռած է որ, օդը երբ ամպէ կամ երբ բացուի, երբ անձրեգայ կամ երկար ժամանակ արեւաբարե ըլլայ, սլաքն ալ անոր համեմատ աջ կամ ձախ կողմը կը չարժի : Որովհեակ օդը միւնոյն կերպով չի ճնշեր ամէն ժամանակ . Երբեմն ծանր է ինչպէս ամպոտ օրեր, աւելի ծանր փորորիկ եղած օրեր, աւելի թեթև՝ երբ փոփոխական է, և շատ աւելի թեթև՝ երբ երկինքը պարզ է :

11. Օդին ճնշումը ի՞նչպէս կը բացարուի . — **12.** Օդին ճնշումը չափող գործիք ո՞րն է : — Մետաղի ծանրաչափը ի՞նչպէս կը ժինուի . — Ինչո՞ւ կը ծառայէ :

8. ԴԱՍ. — ԱՄՓՈՓՈՒՄ ԵՐՐՈՐԴ ԱՄՍՈՒՄՆ (1—12)

Հաստատուն, նեղուկ եւ կազային մարմիններ . (1-3) : — Հաստատուն մարմինները իրենց համար յատուել ձեւ մը ունին . այս ձեւը մինակ այն ասուն կը փոխուի երբ կոտրտենք զանոնք . օրինակ, կտոր մը փայտ, դրամ



Պատկ. 18

մը, քար մը: Հեղուկ մարմինները ի՞նչ ամանի մէջ լեցընենք՝ անոր ձեւը կ'առնան . Օր. ջուր, ձէթ : Կազային մարմինները ոչ միայն ձեւ մը չունին ; այլ կը տարածուին ամէն կողմ . ինչպէս օդի :

Կապարախարը (4-5) . — Մարմինները որչափ բարձրէն իյնան, այնքան աւելի արագ վար կ'իջնան : Մարմինները ուղիղ գիծով վար կ'իջնան : Այս ուղիղ գիծը կամ ուղղաձիզը կը ցուցուի կապարախարով, այսինքն չուան մը որուն ծայրը կտոր մը կապար կայ :

Կշիռը (6-7) . — Մարմիններուն ծանրութիւնը կը ուղիղ համար կը գործածուի կշիռքը, որ յինարանի մը վրայ հաստատուած ձող մ' է : Այս ձողին երկու ծայրերէն կախուած են նժարներ, որոնց մէջ կը դրուի այն բանը որ պէտք է կշուռի :

Զուրին մականասարութիւնը . — Զուրին ճնշումը (8-9) . — Եթէ մեծ թէնէքէի մը վարի կողմէն խողովակ մը կշիռք, թէնէքէին մէջ լեցուած ջուրը ո՛ւր որ բարձրանայ, խողովակին մէջ ալ նոյնպափ կը բարձրանայ . այսինքն միւնոյն մականասարութիւնն վրայ կը մնայ :

Ջուրը սաստիկ կը ճնշէ վարէն վեր՝ այն մարմիններուն վրայ որ իր մէջ կ'ընկղմին : Սաոր համար է որ դատարկ տուփ մը գժուար կ'իջնէ ջուրին յատակը :

Օդապարիկ (10) . — Օդապարիկը կերպասէ շնուռած հաւկթածեւ մըն է՝ լեցուած լուսաւորութեան կազով որ օդէն շատ թեթև է և այս պատճառաւ օդին մէջ կը բարձրանայ : Օդապարիկով աւելի շուտ բարձրանալու համար, օդանաւորդը մէջի պարկերու աւաղը կը թափէ, կամ աւելի շուտ վար իջնելու համար, կափարիչ մը կը բանայ և մաս մը կազ դուրս կը հանէ :

Օդին ճնշումը . Ծանրաչափ (11-12) . — Օդը երկրի վրայ գտնուած բոլոր մարմիններուն վրայ կը ճնշէ :

Ծանրաչափը գործիք մ' է որով օդին ճնշումը կը չափուի : Օդի ճնշումը եղանակին և երկնքի վիճակին համեմատ կ'աւելնայ կը պակսի . երբ աւելնայ, ծանրաչափին սլաքը դէպ ի աջ կողմը կը դառնայ, երբ պակսի դէպ ի ձախ կողմը կը դառնայ, Առաջին պարագային մէջ, աղէկ օդի նշան է . երկրորդին մէջ՝ գէշ օդի :

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

1. ԴԱՍ. — ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

ԸԱՅՈՒԿ Ս. ՆՈՒԽ

1. Ըսէր եւ գրեցէր թէ սա անունները ի՞նչ կը ցուցը-
նեն, այսինքն ինչի՞ անուններ են՝ անձի, բաղադի,
երկի, պետութեան, շենի, շինի, ենայն :

1. Թամաս, յատուկ անուն՝ անձի : — 2. Մարիամ,
յատուկ անուն՝ . . . (ինչի) : — 3. Ֆրանսա, յատուկ
անուն . . . : — 4. Պոլիս, յատուկ անուն . . . : —
5. Մոսկովա, յատուկ անուն . . . : — 6. Անգլիա, յա-
տուկ անուն . . . : — 7. Գանգէս, յատուկ անուն . . . :
— 8. Պալքան, յատուկ անուն . . . : — 9. Բրուսա-
տան, յատուկ անուն . . . : — 10. Ասիա, յատուկ ա-
նուն . . . : — 11. Ռւրմիա, յատուկ անուն . . . : —
12. Վասիլի, յատուկ անուն . . . : — 13. Կրետէ, յա-
տուկ անուն . . . : — 14. Մինաս, յատուկ անուն . . . :
— 15. Էջմիածին, յատուկ անուն . . . : — 16.
Իսկուհի, յատուկ անուն . . .

Ի՞նչ Կ. ՈՒԹԵՆ

2. Քերանացի եւ գրաւոր նաև՝ թէ ի՞նչ կ'ուստեն նե-
տեւեալ կենդանիները :

1. Եղը կ'ուտէ և . . . : — 2. Շունը
կ'ուտէ և . . . : — 3. Ռւզար կ'ուտէ . . . :
— 4. Փիղը կ'ուտէ և . . . : — 5. Ջին կ'ուտէ
. և . . . : — 6. Այծը կ'ուտէ . . . և . . .

- 7. Օձը կ'ուտէ . . . և . . . : — 8. Մուկը կ'ուտէ
. և . . . : — 9. Ջուկը կ'ուտէ . . . , և
. . . : — 10. Աչխարը կ'ուտէ . . . և . . . : — 11.
Թռչունը կ'ուտէ . . . : 12. Գայլը կ'ուտէ . . . և . . . :
— 13. Աղոտէսը կ'ուտէ . . . և . . . : — 14. Նազառ-
տակը կ'ուտէ . . . և . . . : — 15. Կապիկը կ'ուտէ
. . . և . . . : — 16. Խոզը կ'ուտէ . . . և . . .
- 3. Օրինակին պիս բաներ ջիմեցէր .
- 1. Իշխան, իշխել, իշխանութիւն : — 2. Քարոզ,
. : — 3. Քննիչ, : — 4. Շէնք,
. : — 5. Տէր, : — 6. Թագաւոր,
. : — 7. Եղբայր, : — 8. Ընկեր,
9. Ծուռ, : — 10. Մեծ, : —
11. Խենթ, : — 12. Ցած, : —
13. Տաք, : 14. Պազ, : — 15.
Փայլուն, : 16. Դեղին,

ՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՀԱՆԳ

- 4. Պատասխանեցէր բերանացի եւ գրաւոր :
- 1. Ի՞նչ է բառը, ի՞նչ է վանկը :
- 2. Հայերէնի մէջ քանի՞ բաղաձայն գիր կայ և քանի՞
ձայնաւոր :
- 3. Ի՞նչ կ'ըստի երկու պարզ ձայնաւոր գրի՝ որ մէկ
ձայն կը հանեն :
- 4. Ի՞նչ է երկբարբառը :
- 5. Անձ, կենդանի և իր նշանակող բառերը ինչ կ'ըս-
տին բերականութեան մէջ :
- 6. Խոկ ընել՝ ըլլալ ցուցընող բառե՞րը :
- 7. Անձի մը, կենդանիի մը, առարկայի մը ի՞նչպէս
ըլլալ ցուցընող բա՞ռը ինչ կ'ըստի :
- 8. Գտէք 10 հատ որպիսութիւն նշանակող բառեր :

2. ԴԱՍ. — ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԼԵՐԿԱՅՑ

I. Սահմանական Ներկայ. — Եթեք լծորդութեան բայերը (եղ, իշ, ալ) Սահմանական ներկային մէջ ալ տարբեր ձևով կը վերջառողին :

Ա. Լծորդ.

F. L. Dnnnn.

1899.

Ես կը դրեմ	Ես կը խօսիմ	Ես կը կարդամ
Դուն կը գրես	Դուն կը խօսիս	Դուն կը կարդաս
Ան կը գրէ	Ան կը խօսի	Ան կը կարդայ
Մենք կը դրենք	Մենք կը խօսինք	Մենք կը կարդանք
Դուք կը գրէք	Դուք կը խօսիք	Դուք կը կարդաք
Անոնք կը գրենք	Անոնք կը խօսինք	Անոնք կը կարդանք
Ա. Ճողովութեան բայերուն Ապահանական նկութեան կա		

Ա. Եծորդութեան բայերուն Սահմանական ներկան կը
վերջաւորի Եզակիի մէջ — եւ, եւ, և
Յոռքնակի մէջ — եւեւ, եւ, եւ

$\exists n. \rho^n u b k f \cdot nf \cdot y = k f i f \cdot k f \cdot k f$

Բ. Եծորդութեան բայերը Սահմանական ներկայ կ'ըլլան սապէս . Եղակի — իմ, իս, ի
Յոքակի — ինք, իք, ին

Յունակիք — *հայտ, հայտ, հայտ*

Գ. Եծորդութեան բայերը Սահմանական եղանակի
Ներկայ ժամանակը ցուցանելու համար արմատին ծայրը
կը փոխեն սապէս . Եղակի — ամ, աս, այ
Յոքակի — անf, af, ան

Սահմանական ներկայ ոռէք սա բառերը :

1. Հանել, պառկի, հազար

2. Գովիր, հաւնիր, աղար

3. Կանչել, նավի, լուալ

6. Աա բալերուն աներեւոյթները գրեցէր.

Կը կանչեմ, կը պառկինք, կը կարգան, կը հաղաս,
կը սորվին, կ'երգէ, կը քալիս, կը յոցնինք, կը նստի,
կը լուշք, կը սորվիմ, կը կարգայ, կը լուսնք, կը նայ-
իմ, կը պարզէ, կը դիզեմ, կ'աշխատիս, կ'աղայ,
կը սպասենք, կը հաւնիք, կը յուսան:

7. Բ' բանացի լուկ'ք թէ նոյն բայերը ո՞ր լծորդութեան
կը պատկանին՝ Առաջի՞ն , Երկրո՞րդ թէ Երրարդ :

8. Ենին բայերուն սկիզբը դրեք ես, դուն, ան, մեն, որուի, անոնիվ դերանունները, շատ յարնարութեան, այսպէս ես կը կանչեմ, մենիվ կը պառկինք, և այս:

1. Երեք լծորդութեանց Սամի. ներկան միեւնոյն ձևով՝ կը վեցաւորի : — Ա. Լծորդութեան՝ բայերը ի՞նչպէս կը վեցաւորին : — Երերո՞րդը : — Երե՞րդը :

3. ԴԱՍ. — ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

Ա.ԹԱԿԱՆՎԵՐՈՒՄ ՆԵՐՀԱՆ

9. Սա խօսքերուն մէջ շեղագիր բառերուն ներհակը դրեք զիմերուն տեղը :

1. Մեր տանը մեծ չէ, — է: 2. Զեր կօշիկները լայն են, — են: 3. Զեռքերդ մերմակ չեն — են: 4. Լեռները բարձր չեն, — են: 5. Գրիչները հաս չեն, — են:
6. Անոնց քանակները ծուռ չեն, — են: 7. Մեր ազարակին սպասարդները դամբաղ չեն, — են: 8. Հագուստներս աղտոս չեն, — են: 9. Աս գուլպաները երկայն չեն, — են: 10. Չմնուան օդերը սավ չեն, — են: 11. Զեր զբացիները ջար չեն, — են, 12. Անոնց զմելինները զույ չեն, — են:

ԱՐԴԵՍՏՆԵՐ ՈՒ ԱՐԴԵՍՏՆԵՐ

10. **luk'p**, **h^og^g** **l^op^gk**.

Դեղագործը, անասնաբոյթը, բժիշկը, ակնաբոյթը,
առամնաբոյթը, քաղաքապետը, թատերապետը, երա-

ժըշտապետը , ձիավաճառը , փայտահարը , դոհարավաճառը , ձիադարմանը , վիրաբոյժը , արձանագործը , քանդակագործը , աշխարհագիրը , պատմագիրը , երաժիշտը , կատակերգակը , գերասանը , աստեղագէտը , լարախաղացը , ձեռնածուն կամ աճպարարը , նկարիչը , լուսանկարիչը , պայտարը , խաղախորդը , ոստանանկը :

11. Ի՞նչ կ'ըսուի ան .

1. Որ չի տեսներ . 2. Որ չի լսեր . 3. Որ մէկ աչք ունի . 4. Որ մէկ ձեռք ունի . 5. Որ գլուխը մազ չունի . 6. Որ լեզու չունի . 7. Որ բանականութիւնը կորպնցուցած է . 8. Որուն անդամները լուծուած են , (այսինքն չեն կրնար գործել) . 9. Որուն ծնողքը մեռած են . 10. Որուն էրիկը մեռած է . 11. Որուն կոնակը դուրս ցցուած է . 12. Որ մէկ ոտք ունի :

12. Կետերուն տեղ դրեք պատշաճ բառերը , օրինակին համեմատ : Օր. Զին չորս ոտքով կենդանի է :

1. Զին չորս ոտքով . . . է : — 2. Թուչունը երկու ոտքով . . . է : — 3. Սպանախը . . . է : — 4. Ցորենը . . . է : — 5. Սեղանը . . . է : 6. Շաքարը . . . է : — 7. Բաձկոնը . . . է : — 8. Քանակը . . . է : — 9. Խնձորը . . . է : — 10. Շունը . . . է : — 11. Ագառակը . . . է : — 12. Սղոցը . . . է : — 13. Աղը . . . է : — 14. Ուկին . . . է : — 15. Տղուկը . . . է : — 16. Բղեղը . . . է : — 17. Անծեղը . . . է : — 18. Թիսիկը . . . : — 19. Դլփինն ալ . . . է :

ՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՀԱՆԳ

13. Հարցումներուն պատասխանեցէք :

1. Նախադասութիւն մը քանի՞ մասէ կը բարկանայ :
2. Գործողութիւնը կատարող անձը ի՞նչ կ'ըսուի նախադասութեան մէջ :

3. Ի՞նչ տեսակ բառեր Տեր բայի կրնան ըլլալ :
4. » » » Սուրոգելի » » »
5. » » » Սեռի խնդիր » » »
6. » » » Բնութեան խնդիր » »
7. Ի՞նչ հարցումով կը գտնուի Տէր բային :
8. » » » Սեռի խնդիրը :
9. » » » Բնութեան խնդիրը :
10. Ի՞նչ կը կոչուի այն ուսումը որ ուղիղ խօսիլ ու գրել կը սորվեցընէ :

4. ԳԱՍ. — ԱՆՑԵԱԼ ԱՆԿԱՏԱՐ

Զ. Սահմանական Անկատար. — Երեք լծորդութեան բայերուն Սահմանական Անկատարը սապէս կ'ըլլայ .

Ա. Լծորդ.	Բ. Լծորդ.	Գ. Լծորդ.
Ես կը գրէի	կը խօսէի	կը կարդայի
Դուն կը գրէիր	կը խօսէիր	կը կարդայիր
Ան կը գրէր	կը խօսէր	կը կարդար
Մենք կը գրէինք	կը խօսէինք	կը կարդայինք
Դուք կը գրէինք	կը խօսէինք	կը կարդայինք
Աննոք կը գրէինք	կը խօսէինք	կը կարդայինք
Ա. և Բ. լծորդութեանց վերջաւորութիւնները միւնոյն ձեւն ունին . էի , էիր , էր (եղակի մէջ)		էինք , էիք , էին (յոքնակի մէջ):
Գ. լծորդութեան բայերուն Սահմանական անկատարը կը վերջաւորի այսպէս . Եզ. այի , այիր , ար Յոք. այինք , այիք , ային		
Զ. Սահմ. Ներկային և Անկատարին սկիզբը միշտ կը մասնիկ կը գրուի , որ ձայնաւորով սկսող բայերէն առաջ՝ ը գիրը ջնջուելով՝ կ' կ'ըլլայ , իսկ միավանկ բայերէ առաջ կու կը գրուի :		
Օրինակ . — Կի մտածեմ , Կ'ամչնաս , ԿՈՒ լայ :		

14. Սամնանական անկատար ըրէք սա բայերը :

1. Սիրել, Ապղիլ, Պոռալ
2. Ռւզել, Նստիլ, Մնալ
3. Խմել, Աշխատիլ, Խաղալ

15. Էջ 56 Հրանանգի բայերը Սամնանական եղանակ Անկատար Ժամանակի փոխեցէք, այսպէս . Կը կանչէի, կը պառկէինք, կը կարդային, ևայլն:

16. Սա խօսքերը Սամն. Ներկայ են : Աշակերտը Անկատարի բոլ փոխէ գանոնիք՝ բերանացի են գրաւոր :

1. Հայրա գեր կը գրէ : — 2. Դուն շատ կը խօսիա : — 3. Աղքատը կը մուրայ : — 4. Հովիւը ոչխար կ'արածէ : — 5. Ոչխարները խոտ կ'ուտեն : — 6. Ոճրագործը կը պատժուի : — 7. Տո՞ւն կ'երթաս թէ այգի : — 7. Ես միշտ կը կարգամ : 9. Դուք շատ կը խնդաք : — 10. Մենք կը պարտինք : — 11. Անոնք մեր մօտ կը բնակին : 12. Կը համբք ինծի հետ գալ : — 13. Յամոյը (ձեղյան), արջը և առնը (վայրի ոչխար) կը բնակին կեղլոնական Ասիա, Թիսկեթի լեռնադաշտերուն վրայ :

2. Ա. լուրդուրեան Սամն. Անկատարը ի՞նչպէս կը վերջաւորի : Երերո՞րդը : Խոկ երե՞րդը : 3. Կը մասնիկիր ո՞ւր կը դրուի : Ե՞րբ կ'կը գործածէն : Ա՞ր բայեր կու մասնիկ կ'առնեն :

5. ԴԱ.Ա. — ՀՅՈՒԱՆԳԱՅԵՐ

17. Որ արինատառներ կը գործածէն

Մատնոց, մուրճ, եռանկիւն, կապարալար, խարսց, ուրագ, յեսան, կաղապար, մուրճ, սալ, սայլ, արմուխ, լուծ, թակ, աղեղ, մատնոց, դանակ, աքծան, մամուլ, ունելի, երկժամկի :

Օրինակ. — Մատնոցը դերձակի գործիք է . ևայլն :

18. Կեսերուն տեղ յատուկ անուն դրէք :

... բանաստեղծը : ... պատմագիրը : ... մարդարէն : ... կայսրը : ... թագուհին : ... ասպետը : ... առակիախօսը : ... պատկերահանը : ... նաւահանգիստը : ... պատերազմը : ... նեղուցը : ... լեռնագօտին : ... բուրգերը : ... լիճը : ... նաւարանը : ... գինին : ... ծոցը : ... կրպին : ... լեռը : ... ովկիանոսը : ... ծովը : ... կոռակալը : ... ջարը : ... ծահը : ... իշխանը : ... մարտիրոսը : ... առաքեալը : ... կաթուզիկոսը : ... եղակուզոսը : ... նահապետը : ... Փարաւոնը : ... գուքուը : ... էմիրը : ... շէյխը : ... պատրիարքը : ... ազգապետը : ... գեսպանը : ... հիւպատոսը :

19. Հարցումներուն պատսախանեցէք միայն բայլով մը. Օր. Փիոնով կը փչէ, Ունելիով կը բռնէ :

Ի՞նչ կ'ընէ դարբինը՝ փառցով, ունելիով, մուրճով, խաշոցով, ծակիչով, մամուլով :

20. Նոյն բային բոլ դրէք տեր բային եւ նորէն գրեցէք, այսպէս . Դարբինը փիոնով կը փչէ, ունելիով կը բռնէ, մուրճով կը զարնէ, ևայլն :

21. Նոյն խօսքն ընդլայնեցէք՝ աւելցընելով սեռի խնդիր մը. Օրինակ, Դարբինը փառցով կը փչէ կրակը, ևայլն :

ՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՆՈՒԴ

22. Հարցումներուն պատսախանեցէք .

1. Ի՞նչ է անոնք կամ գոյականը :
2. Անունը ե՞րբ յատուկ է և ե՞րբ հասարակ :
3. Ի՞նչ կը ցուցինէ նիւթական անունը . — իսկ վերացականը :

4. Ի՞նչ է տեր բային :
 5. Եղակի տէր բային ի՞նչ թիւ բայ կ'առնէ :
 6. Քանի՞ տեսակ լրացոցիշ կ'ունենայ բայը :
 7. Ուրիշ ի՞նչ բառեր լրացոցիշ կ'առնեն :
 8. Ի՞նչ է դէմքը և քանի՞ է :
 9. Ի՞նչն կ'որոշուի անունին թիւը :
 10. Բային ժամանակը քանի՞ է և ի՞նչ կը ցուցընէ :
 11. Եղանա՞կը քանի՞ է :
 12. Քանի՞ լծորդութիւն կայ :
-

6. ԴԱՍ. — ԱՆՑԵԱԼ ԿԱՏԱՐԵԱԼ.

4. Ասամանական Կատարեալ . — Երեք լծորդութեան բայերուն Սահմ. եղանակի. Անցեալ Կատարեալ ժամանակը սապէս կ'ըլլայ .

Ա. Լծորդ.	Բ. Լծորդ.	Գ. Լծորդ.
Ես գրեցի	Ես խօսեցալ	Ես կարդացի
Դուն — եցիր	Դուն — եցար	Դուն — ացիր
Ան — եց	Ան — եցաւ	Ան — աց
Մենք — եցինք	Մենք — եցանք	Մենք — ացինք
Դուք — եցիք	Դուք — եցաք	Դուք — ացիք
Անոնք — եցին	Անոնք — եցան	Անոնք — ացին

(Ի՞նչպէս կը տեսնուի, Կատարեալին սկիզբը կը մասնիկ չկայ) :

5. Բայը երկու կերպով ցոյց կուտայ անցած գործողութիւն մը: Ի՞նչպէս տեսանք, բայը երկու կերպով կը յայսնէ անցած իրողութիւն մը. մէկը՝ անկատար կերպով որ կը ցուցընէ թէ գործը կատարուած է ուրիշ գործողութեան մը միջոցին: Միւսը՝ կատարեալ կերպով, որ ցոյց կուտայ թէ գործողութիւնը կատարուած է բոլորովին անցած գացած ժամանակի մը մէջ :

23. Անցեալ կատարեալ մեւով խմնարհեցէր .
1. Թրջել , Յոդնիլ , Հազար
2. Փորել , Պտողիլ , Հողալ
3. Բռնել , Նայիլ , Փոփսալ
24. Էջ 56 Հրամանգի բայերը Կատարեալ Անցեալ ը-րեր, այսպէս . Կանչեցի, պատկեցան:
25. Սա խօսքերը յրբնակի ըրեր .
1. Սպասուհին վառեց ճրագը : — 2. Դուն աւլեցիր բակը : — 3. Թուզունը երգեց ծառին վրայ: — 4. Քա-հանան մեռելը թաղեց : — 5. Նաւաստին առագաստ պարզեց : — 6. Վարժապետը ճառ մը խօսեցաւ : — 7. Տէրուէրը Աւետարան կարդաց : — 8. Մատու այրեցաւ բոցէն : — 9. Ես ջորի պէս կարդացի դասս : — 10. Մինչև առտու ցուրտէն գողացիր ու հազացիր : — 11. Ջաղացպանը ցորեն գնեց, աղաց ու ծափեց : — 12. Լոյսը պլալաց :

4. Երեք լծորդութեան Անցեալ Կատարեալ ժամանակը ի՞նչ գրե-ռով կը վերջաւորի: Անցեալ Կատարեալը կը մասնիկ կ'առնէ: 5. Քա-նի՞ կերպ է անցեալը :

7. ԴԱՍ. — ՀՐԱԶԵՆԳՆԵՐ

26. Սա բառերը յրբնակի ըրեր, այսպէս . Աղյատին խրճիթը . — Աղյատներուն խրճիթները, ևայն:
- Աղքատին խրճիթը, հարուստին աղարանքը, թա-գաւորին պալատը, լեռին աղբիւրը, կաքաւին բոյնը, գեղացիին տղան, գեղին դպրոցը, պարտէզին պատը, այս երկրին բնակիցը, ճարտարապետին յատակագիծը, ածուխն բանջարեղինը, որմնագիրին ծեփիչը, հիւսնին կարկինը, ատաղձագործին սղոցը, քարտակովին կրանը,

դարբինին ուռը , հայագործին փուռը , որսորդին հրացանը , կարուակին ասեղն ու հերինը , նառին կայմը , ջուշակին կկոցը , ջանրակը , իլը և շրջնակալը (*) :

27. Սա բայերուն գոյականը գտէք .

Գողնալ , այցելել , թղթակցիլ , գրել , ջրել , քաղել , զամել , մորթել , պագնել , համբուրել , ծխել , ծծել , պասնել , նեղել , գիշերել , օթեւանիլ , երեսել , քաղել , խծղել , կարել , տապկել , զբունել , պասիլ , կաքաւել , լնակիլ , չնչել , մւնչել , որսալ , եփել , ծեփել :

28. Որոշեցէք թէ նետեւեալ առարկաները բո՞յս են , կենդանի՞ են թէ հանք են :

Թէյ , ոչխար , պղինձ , պղպեղ , յամոյր , սամոյր , աշնագ , բրինձ , արջ , քարիւղ , կորեկ , առն , հանքածուխ , նարինջ , երկաթ , պողպատ , խող , մողէս , սեխ , զարի , աղամանդ , բուստ , յակինթ , մարգարիտ , սուտակ , եղջերու , նոխազ , յովատակ , դամբիկ , մանաւնիխ , չուշան , արոյր , աղ , մնդուս :

29. Հարցումներուն պատասխանեցե՛ք ամբողջ նախադասութիւններով , այսպէս . Երկրագործը սայլով թեռ կը կրէ , եալին :

1. Ի՞նչ կ'ընէ երկրագործը՝ սայլով , բրիչով , բահով , տրմուխով , արշով , խարազանով , մանգաղով , երկժանիով , տափանով , եալին :

2. Ի՞նչ կ'ընէ լպուտը՝ թակով , աղեղով , մկրատով , ասեղով , եալին :

(*) Կոց (=մեմիչ) , ջանրակ (=ջղորդ) , իլ (=իլ) , ժոիկ (=մախարա) , շրջնակալ = ջանրակին այն կոսորը , որուն շուրջը կը դիուի դերձանը կամ բուրդը .

30. Նոյն խօսքերուն մեջ բայերը , խնդիրներն ու տէր բայիները որոշեցէք , այսպէս . Երկրագործը սայլով թեռ կը կրէ : Աս խօսքին մէջ բայն է կը կրէ : Ով . — Երկրագործը՝ տէր բայի կը կրէ բային : — Երկրագործը ի՞նչ կը կրէ . — Բեռ , սեռի ինդիր՝ կը կրէ բային : — Խնչո՞վ կը կրէ . — Սայլով՝ բնութեան ինդիր կը կրէ բային :

8. ԴԱՍ . — ԱՊԱՌՆԻ

6. Սահմանական Ապարնի . — Բայերուն Սահմ . եղանակ Ապարնի ժամանակը ճիշդ ներկայ ժամանակին պէս է , միայն թէ սկիզբի կը մասնիկին սեղ պիտի կը դրուի :

Ա. Լծորդ .	Բ. Լծորդ .	Գ. Լծորդ .
Ես պիտի գրեմ	Ես պիտի խօսիմ	Ես պիտի կարդամ
Դուն » գրես	Դուն » խօսիս	Դուն » կարդաս
Ան » գրէ	Ան » խօսի	Ան » կարդայ
Մենք » գրենք	Մենք » խօսինք	Մենք » կարդանք
Դուք » գրեիք	Դուք » խօսիիք	Դուք » կարդաիք
Անոնք » գրեն	Անոնք » խօսին	Անոնք » կարդան

31. Սա բայերը Ապարնի մերով գրեցէք :

1. Վաղել , Նմանիլ , Գթալ ,
2. Ծեծել , Թրջիլ , Բաղձալ ,
3. Կանչել , Հալիլ , Ունալ :

32. Սա խօսքերը Սահմ . ներկայ Գ. դէմրով գրեցէք , այսպէս . Զին արշաւէց — Զին կ'արշաւէ :

Զին արշաւէց : Նապատառակը վագեց : Էջ ցատքը տեց : Եղլ քաշեց : Գառնուկը վաղվզեց : Այծը ոստուտեց : Կատուն ցատքեց : Մողէզը սահեցաւ : Օձը սողաց : Նոր Թուրոց , Գ. Պրուն :

Չուկը լողաց: Որդը զեռաց: Դրօշը ծածանեցաւ: Սկիւ-
ոք մազցեցաւ: Երկիրը թաւալեցաւ: Արծիւը ճախ-
րեց: Առսիծը յարձակեցաւ: Կոյլը զանդաշեց ու խար-
խափեցաւ: Մանուկը կայտուց: Նետը սլացաւ: Առու-
պը սուրաց: Արեւը ծագեցաւ: Եղջերուն վազվեց: Ասիւը հոլովեցաւ: Զուրը հոսեցաւ, վազեց, թափե-
ցաւ: Սլաքը յառաջեց: Ճօճանակը ճօճեցաւ: Նաւը
սուրաց: Կառախումը թաւալեցաւ: Մանձրեւը տեղաց
(Տե՛ս Լրացուցիչ, էջ 52)

33. Ըսէ՛ք՝ ո՞ր լծորդուրեան կը պատկանին նոյն բայերը:

34. Գրեցէք կու մասնիկ առնող 3 բայ: Գրեցէ՛ք կ՝
մասնիկ առնող 5 բայ: Գրեցէք կը առնող 10 բայ:

6. Ա. Լծորդուրեան Սահմ. Եղանակին Ապառնի ժամանակը ի՞նչ
ձեւ կը վերջաւորի: — Խոկ Երկրո՞րդ լծորդուրիւնը: Հապա Երրո՞ր-
դը: Ապառնին կը մասնիկ կ'առնէ: Ապառնին ո՞ր ժամանակի պէս
կը վերջաւորի:

9. Գ.Ա.Ա. — Ա.ՊԱ.Ա.ՆԻ Ա.ՆԿԱ.ՏԱ.Բ

7. Սահմանական՝ Ապառնի Ա.Նկատար. — Ապառնի
Անկատարն ալ Անցեալ Անկատարին ճեւով կը վերջա-
ւորի, կը մասնիկին տեղ պիտի մասնիկ առնելով.

Ա. լծորդ.

Բ. լծորդ.

Գ. լծորդ.

Պիտի գր էի

պիտի խօս էի

պիտի կարդ այի

» գր էիր

» խօս էիր

» կարդ այիր

» գր էր

» խօս էր

» կարդ ար

» գր էինք

» խօս էինք

» կարդ այինք

» գր էիք

» խօս էիք

» կարդ այիք

» գր էին

» խօս էին

» կարդ ային

35. Սա բայերը Ապառնի անկատար մեւով խոնա-
հեցէք. Խնդրել, Տրտմիլ, Սուրալ:

36. Բերանացի եւ գրաւոր պատսախանեցէք եւ գույք
նետեւեալ անոննելոք.

1. Կապոյց ծաղիկ մը: — 2. Կարմիր ծաղիկ մը: —
3. Դեղին ծաղիկ մը: — 4. Մանիշակազոյն ծաղիկ մը:
- 5. Մեծ գետ մը: — 6. Բարձր լեռ մը: — 7. Բնա-
դարձակ մասապատ մը: — 8. Կրծող կինդանի մը: —
9. Արոճացող կենդանի մը: — 10. Մասկեր կենդանի մը:
11. Քաղցրաձայն թռչուն մը: — 12. Փայլուն մետաղ
մը: — 13. Օգտակար հեղուկ մը: — 14. Վնասակար մի-
ջատ մը: — 15. Թրու հեղուկ մը:

37. Էջ 56, Հրանանց 6 ի բայերը Ապառնի անկա-
տար ըրէք: Օրինակ. Պիտի կանչէի, պիտի պառկէիր, եւնի:

7. — Երեք լծորդուրեանց Ա.Նկատար Ապառնին ի՞նչպէս կը վե-
րջաւորի:

10. Գ.Ա.Ա. — Թիւ 2, 4, 6, 8, 9 ԳԱ.ՄԵՐՈՒՆ ԱՄՐՓՈՓՈՒՄԸ

Սահման. Ներկայ. — Բային այն ժամանակը, որ
կը ցուցընէ թէ գործը կը կատարուի խօսուած միջոցին,
կը կոչուի Սահմանական (Եղանակ) Ներկայ (Ժամանակ):

Ա.Նկատար. — Երբ բային նշանակած գործը ան-
ցած լմացած է, բայց ուրիշ գործողութեան մը հետ մէկ
տեղ կատարուած է, այն ատեն բայը Սահմանական (Ե-
ղանակ) Ա.Նկատար (Ժամանակ) կը կոչուի:

Անցեալ կատարեալ. — Երբ բայը կը ցուցընէ գոր-
ծողութիւն մը որ բոլորովին անցած ժամանակի մէջ
տեղի ունեցած է, այդ բայը Անցեալ կատարեալ կ'ըսուի:

Անցած գործ մը երկու ձեւով կը բացատրուի. — Բային
նշանակած գործողութիւնը երբ կատարուած լմացած
է, կ'արտայացուի երկու կերպով. մէկը Ա.Նկատար՝
միւսը Կատարեալ:

Ապառնի. — Երբ բայլն ցուցուցած գործը դեռ չէ կատարուած, կամ հիմա չի կատարուիր՝ այլ ասկէ վերջը գալիք ժամանակ մը պիտի կատարուի, այն բայլ Ապառնի ժամանակ է :

Ապառնին ալ երկուք է . Ներկայ Ապառնի, Անկարաւ Ապառնի :

Ներկայ Ապառնին կը նշանակէ թէ գործողութիւնը հիմա կամ վերջը պիտի կատարուի : Իսկ Անկարաւ Ապառնին ուրիշ բայց մը կախում ունենալով՝ կը յայտնէ թէ գործողութիւնը կատարուած չէ :

11. ԳՈ.Ս. — ՀՅՈՒՅՈՒԳԻՆԵՐ

38. Սա բայերուն արևատները գուեր :

Օրինակ, Քաղել — յայլ :

1. Մշակել, երգել, փորել, շարել, գործել, վառել, չերկել, ներկել, եփել, ծեփել, ծեծել, ծծել :

2. Խօսիլ, պատիլ, դադրիլ, շարժիլ, կանգնիլ, փայլիլ, բուռնիլ, խորտիլ, հալիլ, եփիլ, ոսիլ, հումիլ, ծիլ :

3. Հոգալ, մոռալ, խաղալ, որսալ, յուսալ, հաղալ, երերալ, ծիսալ, միսալ, դողալ, շողալ, կաշալ, պլաղալ, ջանալ :

39. Հարցումներուն պատասխանելով՝ խօսքեր կազմեցեր, այսպէս . Դաշտառը դաս կը վարէ :

1. Դատաւորը Բնէ Կընէ : — 2. Նաւազե՞ող : — 3. Բժիշկը : — 4. Բրո՞ւսը : — 5. Ճգնաւո՞րը : — 6. Վաճառականը : — 7. Այգեգո՞րծը : — 8. Հիւնը : — 9. Ճամբո՞րդը : — 10. Մշա՞կը : — 11. Պարտիզանը :

40. Սա երեք բայերը պիտցեր Սահմ. եղանակ Ներկայ, Անկարաւ, եւ Կատարեալ մերով, այսպէս .

Ես կը անկեմ, դուն կը բռւմիս, ան կը ծփայ, Մենք կը անկենք, դուք կը բռւմիք, անոնք կը ծփան :

41. Գրեցէր Ապառնի ժամանակներն ալ :

12. ԳՈ.Ս. — Ս. Գ. Ն. կամ Բ. Գերերը

Տ. Անունները որոշող գիրեվը — Երբ տուն կ'ըսեմ, յայտնի չէ թէ ո՞ր տունը կամ որո՞ւ տուն ըսել կ'ուզեմ: Բայց երբ ըսեմ Տունս, ան տաեն կը հասկցուի թէ իմ տունս ըսել կ'ուզեմ,

Նոյնպէս երբ տուն դ կ'ըսեմ, յայտնի է թէ յու տունդ հասկցնել կ'ուզեմ :

Երբ տունը ըսեմ, կը հասկցուի անոր (այսինչ մարդուն) տունը կամ այս ինչ որոշ և ծանօթ տունը :

Պ. Ս, Գ, Բ (Ն) ՅՈՒՅԵՐԸ: — Այս Ս, Գ, Բ և Ն գիրերը յօդ կը կոչուին և գոյականներուն ծայրը կցուելով ցոյց կուտան թէ գոյականը որոշեալ իմաստով գործածուած է :

ԼՕ. Զայնաւորով վերջացող անուններուն ծայրը և յօդ կը գրուի : Օրինակ՝ Մեզուը չ'ըսուիր, այլ մեզուն :

42. Սա անուններուն ծայր' յօդի ջնջեցէր .

Պարտէզին դուռը : — Քաղաքին փողոցները : — Ուզափս պոչը : — Զակիս մէրը : — Վարժապետիդ հրամանը : — Ժամացոյցին պլաքը : — Վարժուհիս խրամը : — Պարտէզիդ ածուները : — Կերակուրին ազը : — Գրիմին ծայրը : — Աղքատին հագուսաը : — Մանուկին անունը : — Յիսուսին առաքեալները : — Դափիմին քնարը :

43. Սա անուններէն ո՞րը յօդ ունի եւ ո՞րը ջունի՝ զատ զատ գրեցէր :

Թան, չորթան, աւանդ, տս, բերան, սեղան, գե-

րան, յոյս, լոյս, բոյս, կոյս, հուն, բուն, քուն, շոն, տոն, մածոն, անոն, աշոն, մարմանդ, հիւանդ, եռանդ, արգանդ, սանդ, պատանդ, սպանդ, աւան, գաւաղան, հայս, թելահայս, խիս, հիւս :

44. Աս բառերում ծայրը եղ, իլ, աղ կցելով՝ բայեր կազմեցէք :

1. Ճամփորդ, խաղ, խաչ, խոյ, պատան, պատ, բիր, հերկ, բժիշկ, դեղ, մորթ, չնորհ, վաստակ, ծախ, եռ, խօս, հոգ, աղ, փայլ, ծիծ, ծուծ, ծաղիկ, սող, շող, շարժ, քար, արին, կատկած, խոյ, կրակ, լակ, ծիլ :

2. Գոյ, կարճ, նեղ, խոնարհ, լուսաւոր, մօտ, փառաւոր, պակաս, փակ, շուայլ, մեծ, ուժով, ծածուկ, հաստատ, ժանդոտ, նուազ, արձակ, դանդաղ, յաճախ :

8. Անունները որոշող զիւերը որո՞նք են : — 9. Ե՞նչ էր կոչովին այդ զիւերը : — 10. Ե՞ր ն էր դրովի և Ե՞ր Ռ :

13. Գ.Ա. — ՀԲԱՀԱՆԳՆԵՐ

45. Աս խօսքերում մեջ գոնք՝ Տէր բայինները :

1. Պարտէզին դուռը զայեցի : — 2. Քաղաքին փողոցները չափեցիր : — 3. Ուղախս պոչը քաշեց : — 4. Զաւկիս սէրը պիտի յիշեմ : — 5. Վարժապետիդ հրամանը կատարեցի՞ր : — 6. Ժամացոյցին ուղաքը հանեցինք : — 7. Վարժուհիս խրառը պիտի լսէք : — 8. Պարտէզիդ ածոները կը մաքրէի : — 9. Կերակուրին աղը ցանեցին : — 10. Գրիչին ծայրը ծռեց : — 11. Աղքատին հագուստը կը կարկուէի : — 12. Մանուկին անոնը Յիսուս կոչեցին : — 13. Յիսուսին առաքեալները կը պատռենք : — 14. Գաւիթին քնարը կը հնչեցրնեմ :

46. Նոյն հրամանները նորէն օրինակեցէք՝ Տէր բայիններն

ալ գրելով, եւ բայերուն տակեն զիծ քաշեցէք, ալսպէն . — Պարտէզին դուռը ԵՍ (Տէր բայի) զոցեցի :

47. Իբրև մեկ բայ խնարինեցէք սա վեց բայերը :

Մամուալ, տոսիլ, վճարել,
Հալիլ, նորոգել, խորդալ :

48. Աս գոյց անուններում ծայրը յօդ դրէք :

Հացի կեղեւ : — Գրքի կողք : — Քարիւղի հոս : — Աղբիւրի ջուր : — Գեսի եղերք : — Ածուխի փոշի : — Ծառի ծիւղ : — Չեռքի փայտ : — Ոտքի կոշտ : — Կոնակի սակոր : — Հովիւի շուն : — Տոնի պահապան : — Ճաշի սեղան : — Քաղաքի դուռ : — Ճգնաւորի բնակարան : — Վարտէնդի կուտ : — Ճրագի լոյս : — Գետի հուն : — Ծառի բուն : — Դնդղուցի միս :

49. Նոյն բառերը մերմեկ խօսքի մէջ գործածեցէք իբրև Տէր բայի կամ Խնդիր :

Օրինակ. — Հացին կեղեւը կը սիրեմ : — Գրքին կողքը պատահցաւ :

50. Գրեցէք 10 բառ, եղ վերջաւորող, 10 բայ իլ վերջաւորող եւ 10 բայ աղ վերջաւորող :

51. Սահմանին համեմատ յատուկ անունները գոնք :

1. Տիեզերքին արարիչը : — 2. Բնակած երկիրդ : — 3. Չորս Աւետարանը գրողները : 4. Մեր նախաձնողներուն բնակած երկիրը : — 5. Ամերիկան գտնող նաւապետը : — 6. Օսմ. Պետովեհան հիմնադիրը : — 7. Առաջին մարտիրոսը : — 8. Թուրքիայի մայրաքաղաքը : — 9. Սաղմոսները գրող մարգարէն : — 10. Եղիսաբետի մէջէն անցնող գետը : 11. Այն գետը զոր Մովսէս իր գաւաղանով երկուքի բաժնեց : — 12. Այն երկիրը որ Ֆրաթու թիճրէ գետերուն մէջտեղ կը գտնուի :

14. ԳԱԱ. — ՎԵՐԱՔԱՂ. ԲԱՅԻ

11. Բայ. — 1. Բայը բառ մէ որ կը նշանակէ բան մը ընել կամ ըլլալ :

Բայը կ'արտայայտէ գործ մը զոր կ'ընենք :

Նաև բայը կը հաստատէ թէ անձ մը կամ իր մը ի՞նչ յատկութիւն ունին :

2. Տէր բայի . — Տէր բային կը ներկայացընէ այն անձը կամ իրը որ գործ մը կ'ընէ կամ այս ինչ յատկութիւնն ունի :

3. Բային երեք դիմքեր. — Առաջին դէմքն է խօսողը:

4. դէմքը ևս գերանունն է : (*)

Երկորդ դէմքը այն անձն է որուն կը խօսինք :

5. դէմքը դուն գերանունն է : (**) Երրորդ դէմքն է այն անձը որուն խօսքը կ'ընենք :

6. դէմքը ան գերանունն է կամ գոյական մը : (***)

4. Թիւ. — Բայը կրնայ ըլլալ եղակի կամ Յոքնակի : Բայը երկու թիւ ունի :

Եղակի. — Ես, դուն, ան գերանունները եղակի բայեր կրնան ունենալ :

Յոքնակի. — Մենի, զոր, անենի գերանուններն ալ յոքնակի բայերու հետ կը գործածուին :

52. Գոյական Տէր բայիով 5 նախադասութիւն գրեցէր .

53. Կետերուն տեղ պատշաճ բառերը դրեր .

1. Կազնին շատ մեծ ... է, որ կը բունի ... ին մէջ :

2. Բարձր լեռներուն վրայ ամառ ձմեռ ... կը գըտ-

նուի : Այդ ձիւնը ամառ ատեն հալելով ... կ'ըլլայ և ... էն վար հոսելով ... կը կազմէ և կ'երթայ թափիլ ... (ուր) :

(*) Ես գերանունին քով 5 բայ դրէք :

(**) Դուն գերանունին քով 5 բայ դրէք :

(***) Ան գերանունին քով 5 բայ դրէք :

3. Պաղատու ծառերուն վրայ գարնան կը բացուին գոյնզգոյն . . . , որոնք ամառը . . . կ'ըլլան :

4. Զին մարդուս օգտակար . . . է :

5. Մայրերը գուրգուրանքով կը խնամեն իրենց . . .

6. Գիշերը լոյս ունենալու համար . . . , . . . , . . . , . . . , և . . . կը վառենք :

7. Փոթորիկի ատեն, . . . կ'որոտան, և . . . կը փայլատակէ : Այդ միջոցին վտանգաւոր է . . . տակ ապաստանիլ : Բարձր շէնքերը . . . էն զերծ մնալու համար . . . կ'ունենան :

54. Գտէր այս հրամանգին մեջի բայերը .

15. ԳԱԱ. — ՎԵՐԱՔԱՂ. ԲԱՅԻ (Շար.)

12. Ժամանակ. — 1. Ժամանակը կը ցուցընէ թէ դործողութիւնն մը ե՞րբ կատարուած է, ե՞րբ կը կատարուի, ե՞րբ պիտի կատարուի :

2. Ժամանակը երեք է . Ներկայ, Անցեալ, Ապանի :

3. Ներկան կը ցուցընէ թէ գործը կը կատարուի խօսուած պահուն :

4. Անցեալը կը ցուցընէ թէ գործը կատարուած լմինցած է առաջուընէ :

5. Ապանին կը ցուցընէ թէ գործը դեռ նոր պիտի կատարուի :

13. Եղանակ. — 1. Եղանակը կը յայտնէ թէ ի՞նչ ձեւով, ի՞նչ կերպով կը կատարուի գործը :

2. Եղանակը հինգ է .

3. Սահմանական որ գործողութիւնը կը հաստատէ, կը սահմանէ :

4. Հրամայական որ պատուէր կամ հրաման կը ցուցընէ :

5. Սոռրադասական որ կը ցուցընէ թէ գործ մը ու-
րիշ գործէ մը վերջը կը պատահի :

6. Անորոշ կամ Աներեւոյք որ կը յայտնէ անսասոյզ,
անորոշ գործողութիւն մը :

7. Ընդունելութիւն կամ Դերբայ որ անձերուն և իրե-
րուն յատկութիւնը՝ վիճակը կը ցուցընէ :

14. Առմաս. — Բային ար Խատը այն մասն է որ
նշանակութիւն մը ունի : Արմատը անփոխի կը միայ
բային ամբողջ լծորդութեան մէջ :

15. Վերջաւորութիւն. — Բային վերջաւորութիւնը
այն մասն է որ դէմքին, թիւին, ժամանակին, եղա-
նակին և լծորդութեան համեմատ կը փոխուի :

55. Հետեւեալ խօսքերուն մէջ դերանունները ի՞նչ դեմք
եւ ի՞նչ թիւ են :

Դուն կը լսես : — Մենք կը նետենք : — Դուք կը
յուսաք : — Անոնք կը թողնեն : — Ես կը հարցընեմ : —
Անոնք պիտի գրունեն : — Ան կը անտընայ : — Դուք կը
գանիք : — Դուն կ'ընկղմիս : — Անոնք կը սիսալին : —
Ես մոլորեցայ : — Ան կը նմանի : — Դուն կը քալես :

56. Գրեցէր երկու նախադասութիւն՝ եզակի բայոլ :
Գրեցէր երեք նախադասութիւն յոթնակի բայոլ :

57. Երեք խօսք ալ գրեցէր, որոնց մէջ բայը անցեալ
ժամանակ ցուցընէ : — Երեք նախադասութիւն ալ Ա-
պանի ժամանակով գրեցէր :

58. Գոյն նշանակող ածական մը դրեք կիտերուն տեղ:
Օրինակ. Յարդը դեղին է :

Յարդը . . . է : — Կեռասը . . . է : — Խաղողը . . .
է : — Խոտը . . . է : — Շապիկը . . . է : — Ամպը . . .
է : — Պղինձը . . . է : — Կիտրոնը . . . է : — Նարին-
ջը . . . է : — Ածուխը . . . է : — Կաթը . . . է : —
Շուշանը . . . է : — Մեխակը . . . է : — Սրինը . . . է :

16. Գ.Ա.Ս. — Վ.ԵՐԱ.Ք.Ա. ԾՈ.ՅԻ (Շար.)

16. Երեք լծորդութիւն. — Բայերը երեք կերպ կը
խնարհին : Աներեւոյթին վերջաւորութիւնը կը ցուցընէ
թէ ո՞ր լծորդութիւնէն է լսալը :

Ել վերջաւորող աներեւոյթը Ա. լծորդութիւն է :

Իլ վերջաւորող աներեւոյթը Բ. լծորդութիւն է :

Ալ վերջաւորող աներեւոյթը Գ. լծորդութիւն է :

17. Ներկայ. — Երբ բային ցաւցուցած գործը խօս-
ուած ատեն կը կատարուի, բայց Սահմ. ներկայ է :

18. Անկատար. — Երբ գործողութիւնը կատար-
ուած է անցեալ ժամանակի մէջ՝ ուրիշ գործողութեան
մը հետ, այն ատեն բայց Սահմ. անկատար ժամանակ
կը ցուցընէ: (Օր. Ես կը կարդայի, երբ գուն կ'ալօթէիր:)

19. Անցեալ կատարեալ. — Երբ գործ մը շատոնց
կատարուած լմացած է, բայց Անցեալ կատարեալ ժա-
մանակ կը դրուի :

20. Ապառնի. — Երբ բայը կը ցուցընէ գործ մը որ
ապագային պիտի կատարուի, այն ատեն Ապառնի ժա-
մանակ է :

21. Անկատար Ապառնի. — Երբ բայը կը ցուցընէ
գործ մը որ ուրիշ գործողութիւնէ մը կախում ունեցած
է բայց չէ կատարուեր, այն ատեն Անկատար Ապառնի
ժամանակ է :

59. Սա խօսքերն օրինակեցէր՝ որոշելով բայերուն
ժամանակը եւ լծորդութիւնը :

Դուն կը խնդաս : Ան կը խօսէր : Անոնք վարձատ-
րուեցան : Մենք անիծեցինք : Ես կը վաճառէի : Դուք
կ'ասէիք : Ես մերժեցի : Անոնք պիտի զատուին : Ճրա-
գը վասեց : Դուք պիտի բարձրանաք : Ան պղտիկցաւ :

60. Նոյն բայերուն նականիշները գոնելով՝ խօսքերը

նորէն գրեցէք, այսպէս. Դուն կուլաս: Ան կը լոէր, և լո:

61. Ենցափէս կը վերջաւորին երեք լծորդութիւններու բայերը՝ Սահմ. ներկայի մէջ :

62. Եսկ Սելիստարի՞ մէջ : Կատարեալ անցեալին վերջաւորութիւնները որոնք են: Երեք լծորդութեան բայերուն Ապառնիի վերջաւորութիւններն ալ գրեցէք :

17. ԴԱՍ. — ՀՐ Ա Զ Ա Ն Գ Ն Ե Ր

63. Հետեւեալ հարցումներուն ուշ գրեք: Տեսէ՞ք պատասխաններուն մէջ փայտ գոյականը գրաւած է ալ եւ ալ մեներով (փայտ, փայտին, փայտեն, փայտով) :

Հարցումներ	Պատասխաններ
Փայտը լինչ կ'ըլլայ	— Փայտը կը չորնայ
Ի՞նչն ծայրը կարեցիր	— Փայտին ծայրը կարեցի:
Չեռքդ լինչին դպաւ:	— Չեռքս փայտին դպաւ:
Ի՞նչէն աւելի կարծր է քարը:	— Փայտին աւելի կարծր է քարը:

Ի՞նչով սեղան կը շինուի — Փայտով սեղան կը շինուի:
Ի՞նչը կը տաշես ուրագով — Փայտը կը տաշեմ ուրագով:

64. Նոյնպէս պատասխաննեցէք հետեւեալ հարցումներուն՝ գործածելով ծառ հաւարակ անունը :

1. Ի՞նչը կը ծաղկի: — 2. Ի՞նչին պատուղը կը քաղես:
- 3. Ի՞նչի կը փաթթուինք՝ վրան մազլցելու համար:
- 4. Ի՞նչէն վար ինկար: — 5. Ի՞նչով պատած է պարտէղը: — 6. Ի՞նչը կը կարես կացինով:

65. Սա հարցումներուն պատասխաննեցէք (խօսքերն ամբողջ ըլլան) .

1. Շունը լինչ կ'ընէ: — Եղբայրդ լինչ կը կարդայ:
- Պահապանը լինչ կ'ընէ: — Ո՞վ կը խրատէ իր սաները:

2. Ի՞նչ կը տեսնես երկինքը: — Հայրիկդ շատ կը սիրո՞ւ: — Պատկեր զծեցի՞ր:

3. Որո՞ւ խրատը մամիկ կ'ընես: — Արեւին չողերը լինչ կ'ընեն: — Վերարկուիդ լինչը կը կոճկես:

4. Ո՞ր կենդանին կը նմանի գայլը: Սա կօշիկը ոսքիդ կը յարմարի՞: — Ծառէն լինչ կը քաղենք: — Խաչկեր ո՞ւր տեսար: — Փայտով լինչ կ'ընենք: — Ի՞նչով գիր կը գրենք: — Բարեկամիդ լինչ զրկեցիր:

(Ուշադրութիւն ըրէք Թէ պատասխաններուն մէջ զրյականները լինչպէս կը վերջաւորին = ին, են, ով):

66. Սահմ. ներկային վեց դեմքերով գրեցէք:
Արտը հերկել, ցանել, հնձել:

67. Սա խօսքերը Անկատարին վեց դեմքերով գրեցէք.
Դասարանին մէջ աշխատիւ, գրել, կարդալ:

68. Սա խօսքերը գրեցէք Անցեալ կատարեալին վեց դեմքերով.

Պարուէլը ջրել ու խնամել:

69. Սա խօսքերն ալ Ապաննիով գրեցէք.
Լուսինը դիմել ու զմայիլ:

18. ԴԱՍ. — ԱՄՓՈՓՈՒՄ Ա. ԵՌԱՄՍԵԱԿԻՆ

Բառ, վաճիկ, գիր. — — Բառ կը կոչուի մէկ կամ աւելի նշշնչը կամ ձախը որ խմաստ ունի, եւ կը կազմուի վանիկերէ: Իսկ զիրեւը նշաններ են որով բառ կը կաշմուի:

Զայնառոր տառերը ութը հատեն. ա, ե, կ, ը, ի, ո, ւ, օ:

Պարզ ձայնաւորը մէկ գիր կ'ունենայ, Բաղադրեալ ձայնաւորը մէկէ աւելի գիրերէ կը կազմուի՝ բայց մէկ ձայն կուտայ: Իսկ երկրարբառը երկու ձայնաւորէ կը բաղկանայ՝ որոնք մէկ անդամէն կ'արտասանուին բայց երկու նշիւն կուտան:

Բաղանային տառերը 30 հատ են : Ասոնք ձայնաւորի հետ կրնան հնչուիլ :

Ե և է միենոյն ձայնն ունին բառին մէջտեղը : Ո և Օ՝ նոյնպէս : ՈՒ բաղադրեալ ձայնաւորը Վ, կամ ՈՒ կը հնչուի : Յ գիրն ալ երեք կերպ կը հնչուի :

Սնուն, Բայ, Ածական . — Սնունը անձ, կենդանի կամ իր կը նշանակէ :

Բայը գործ կամ վիճակ կը ցուցընէ :

Ածականը որպիսութիւն կը ցուցընէ :

Նախադասութիւն. — Նախադասութիւնը կը պարունակէ Տէր բայի, Բայ, Ստորոգելի :

Տէր բայի . — Բային տէրն է այն անձը, կամ կենդանին, կամ առարկան որուն վրայ կը խօսուի :

Տէր բայիին լրացուցիչ են այն բառերը որ անոր իմաստը կ'ամբողջացընեն :

Բայ. — Բայը կամ գործողութիւն մը կը նշանակէ, կամ Տէր բայիին ինչպէս ըլլալը կը հաստատէ :

Բայը կրնայ ստորոգելին հետ միացած ըլլալ :

Ստորոգելի . — Ստորոգելին տէր բայիին որպիսութիւնը կը ցուցընէ . Ստորոգելիին լրացուցիչ են անոր իմաստը լրացընող բառերը :

70. Սա խօսքերը զիեցեր բայերան բարոր ժամանակերով, բիւերով ու դիմերով :

Ես ծովուն մէջ կը լողամ :

Ես կաթ կը խմեն :

Օքինակ. — Սահմ. Եղանակ Ներկայ Ժամանակ . — Ես կար կը խմեն, դուն կար կը խմեն, ևայն :

Անկատար. — Ես կար կը խմենի, ևայն :

Կատարեալ. — Ես կար խմեցի, ևայն :

19. ԳԱՍ. — ԱՄՓՈՓՈԽ Ա. ՆՌԱՄԵՆԱԿԻՆ (Շար.)

Անուն. — Հասարակ անունը այն է որ միենայն տեսակէ ամէն անհատի կամ առարկայի կը յարմարի :

Յատուկ անունը կը պատշաճի մէկ անձի, մէկ առարկայի կամ միենոյն տեսակէ եղող խումբ մը անձերու կամ իրերու :

Նիւրական անունը չօշափելի կամ զգալի էակ կամ իր կը ցուցընէ, խո՛լ վերացական անունը մաքով ըմբռանուող բան մը կը յայտնէ :

Տէր բայի եւ Խենդիր. — **Տէր բային** գործողութիւնը կատարող անձն է :

Տէր բայի կրնան ըլլալ անունն ու դերանունը :

Խենդիր կամ լրացուցիչ է այն բառը որ բային խմասար կ'ամբողջացընէ : Սեռի խենդիրը կը գանուի զո՞վ կամ ի՞նչը հարցումներով : Խենդիրան խենդիրը կը զըտնուի բային քով այլ և այլ հարցումներ գնելով . (որո՞ւ ի՞նչ բանի, որմէ՞ս, ի՞նչ բանէ, ևայն) :

Բային խնդիր կ'ըլլան անունն ու դերանունը :

Գևիս, Թիւ . — Դէմիր երեք է, ան որ կը խօսի (ևս), ան՝ որուն կ'ուզենք խօսքը (դունե), և ան՝ որուն վրայ կը խօսինք (ան) :

Թիւը երկուք է. — եզակի, որ մէկ հատ կը ցուցընէ, և յովեակի որ շատի խմաս կուտայ : Անունները, բայերը և դերանունները թիւ կ'ունենան :

Անունը յոքնակի կ'ըլլայ եր կամ ներ մասնիկով :

Ժամանակ, Եղանակ, Ծուզութիւն . — Ժամանակը երեք է — Սնցեալ, Ներկայ, Ապանենի: Եղանակը հինգ է, Սահմանական, Հրամայական, Ստորադաստական, Աներեւոյթ, Դերբայ կամ Ընդունելութիւն : Լծորդութիւնը երեք է . Աներեւոյթը ել վերջաւորող բայեր, իլ վերջաւորող բայեր և ալ վերջաւորող բայեր :

20. Դ.Ս.Ս. — Ա.Մ.ՓՈՓՈՒՄ Ա. ԵԹ.Ա.Մ.ՍԵԱԿԻՒՆ (Դերք)

Սահմանական Ներկան կը վերջաւորի՝

Ա. լծորդ. — եմ, ես, է, ենի, իֆ, են :

Բ. » — իմ, իս, ի, ինի, իֆ, ին :

Գ. » — ամ, աս, այ, անի, աֆ, ան :

Սահմ. Անկատարը կը վերջաւորի՝

Ա. լծորդ. — իի, իիր, իր, իինի, իիֆ, իին :

Բ. » — (Նոյն)

Գ. » — այի, այիր, ար, այինի, այիֆ, ային :

Սահմ. Կատարեալը կը վերջաւորի՝

Ա. լծորդ. — եցի, եցիր, եց, եցինի, եցիֆ, եցին :

Բ. » — եցայ, եցար, եցաւ, եցանի, եցաֆ, եցան :

Գ. » — ացի, ացիր, աց, ացինի, ացիֆ, ացին :

Սահմ. Ապառնին կը վերջաւորի ճիշդ Սահմ. Անկատարին պէս, միայն կը մասնիկին տեղ պիտի կ'առնէ :


Սահմ. Ապառնի Անկատարը կը վերջաւորի Սահմ. Անկատարին պէս, կը մասնիկին տեղ պիտի առնելով :

Անունները որոշող զիրեր. Ա. Դ. Ն. (կամ Բ.) յօդերը անունին ծայրը կը դնենք՝ անոր իմաստը որոշելու կամ դէմքերը ցոյց տալու համար :

Ն յօդը կը դրուի ձայնաւորով վերջացող անուններուն ծայրը, ինչպէս նաև երբ յաջորդ բառը ձայնաւորով կամ չ գրով ակսի: (Ձեռքով և առաւ: Փոսի ինկաւ: Եղբօրն համար, եւայն):

Անուններուն ծայրը. — Այս յօդերէն գատ, անուններուն ծայրը ուրիշ գիրեր ալ կրնանք աւելցնել, ինչպէս. Յորեն, յորենի, յորեննէ, յորենով, կամ յորենին, յորեն էն, յորեն ովը :

Վերջ Գ. ՊՐԱԿԻՒՆ



ՀԱՅՈՒ-ԱՐԱՐ

3n

ՆՈՐ ԴՊՐՈՑ

ՆԱԽԱԿԻՐԹՈՒԹԵԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔ

ՀԱՄԱԿԱՏՎԱՐՈՒ, ԴՐՅՈՒԹԵԱԱՄԲ

1⁰.—Դպրոցական տարին 10 տմիս ըլլալով՝ ՆՈՐ ԴՊՐՈՑՆ ալ տասը Պրակներու բաժնուած է։ Մէն մի Պրակ կը պարունակէ մէկ ամսուան մէջ ուսանելի առարկաներէն ամէն այն ճիւղերը, որոնք պարտաւորիչ են Նախակրթութեան Գանձնթացքին համար։

2⁰.—Դասերու աւանդումը նշգոր ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑԸ տպուած է Վեցերորդ Պրակին մէջ։ Խակ շարամական ԴԱՍԼՅՈՒՅԱԿԱՆ որոշուած են թ. Պրակին կցուած յաւելուածական Թերթով մը։

3⁰.—ՆՈՐ ԴՊՐՈՑԻ պարունակութեան և մէծութին վրայ մանրաւ մասն խօսուած է ԵՐԱԱԲԵՐԱԿԱՆ ԾԱՆԴԻՑԱԴԻԲ անուն մանաւոր Պրակին մէջ (որ փափաքներուն ձրի կը զրկուի), ինչպէս և Ա. Պրակին սկիզբը։ Անոնց ընթերցումը կը յանձնարքենք ամէն Աւուցչի։

4⁰.—ՆՈՐ ԴՊՐՈՑԸ հիմնուած է Համակեղցոն Դրութեան վայ, հետեւողութեամբ Աւուցչական Ա. Սէնեկդի համանուն զրծին, որ մեծ հոչչակ հանած է և կը զորմածուի Երրորդական առաջնակարգ դպրոց ներու մէջ։

5⁰.—ՆՈՐ ԴՊՐՈՑԻն շնորհիւ կուրելի կ'ըլլայ հաստատել կրանուաւորութիւն և միօրինակութիւն՝ բոլոր Հայ զպրոցներու մէջ ուր ըն դունուած է։

6⁰.—ՆՈՐ ԴՊՐՈՑԸ ամէնէն լուսամիտ առաջնորդն է Հայ Աւուցիչն և անոր կը Թելադրէ ժամանակակից կրթութեան ոգին և մանկա վարժութեան զորմանական եղանակները։

7⁰.—ՆՈՐ ԴՊՐՈՑԸ կուրելի է ստանալ զատ զատ Պրակներով և կամ 10 պրակը միասին կազմուած։

8⁰.—Ամբողջ 10 Պրակին զինն է Պոլսոյ համար 30 զի՞րոշ, զաւառներու համար 35 զրուշ, արտասահմանի համար 8 ֆրանք (3 բուլգ)։ Փոսթի ծախքը մեր վրայ է։

9⁰.—Պրակները զատ զատ կը ծախուին Ֆական դրուշի։

10⁰.—Տասը մեռք մէկէն զնողը 1 մեռք նուէր կը ստանայ։

Աստանա Հայաստան Խորասպիան Խանճե սմբատ պէտի Դաօդիան

Հասցե.՝ ՍՄԲԱՏ էֆ. Գլիխելին

Խորասանձեան խան, Աիրմէկահ, Կ. Պոլիս

2013

3521

ՀՀ Ազգային գրադարան



NL0060720

